«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ
ԲՅՈՒՋԵԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ **3**

1. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ 8
2. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ 2023-2025 թթ. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 14
3. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՒ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 19
4. 2023-2025ԹԹ. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 25
5. ԲՈՒՀԵՐԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ և ՎԱՐՉԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՖՈԿՈՒՍ ԽՄԲԵՐԻ ՀԵՏ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 39

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ***43***

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ***50***

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ***58***

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ***60***

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բարձրագույն կրթության ոլորտում ծրագրերի կայունությունն ու արդյունավետությունը կախված են պետական բյուջեի արդյունավետ և նպատակային հատկացումներից: Բյուջետային գործընթացների թափանցիկությունն ու հաշվետվողականությունն հնարավորություն են տալիս հասկանալու՝ ինչպես են բաշխվում և օգտագործվում հանրային միջոցները, թե ինչպես են օգտագործվում միջոցները, գնահատելու ծրագրերի իրական ազդեցությունը և ապահովելու հանրության վստահությունն ու մասնակցությունը ոլորտային քաղաքականությունների ձևավորման մեջ:

Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտում շարունակվում է թափանցիկության և հանրային մասնակցության հետ կապված խնդիրների առկայությունը, ինչը սահմանափակում է ոլորտային քաղաքականությունների արդյունավետ մշակումն ու իրականացումը: Պետական բյուջետային ծրագրերի մասին տեղեկատվությունը հաճախ մատչելի կամ բավարար չափով հասկանալի չէ ուսանողների, դասախոսների և ոլորտի այլ շահագրգիռ կողմերի համար: Նման իրավիճակում նվազում են հանրային վերահսկողության հնարավորությունները, իսկ քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներում մասնակցությունը դառնում է ձևական:

Սույն վերլուծությունը նպատակ ունի խթանել բարձրագույն կրթության ոլորտի բյուջետային ծրագրերի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը՝ բյուջետային ծրագրերի մոնիթորինգի և պարզեցված բյուջեների ներկայացման միջոցով: Սա հնարավորություն կտա շահագրգիռ խմբերին ավելի լավ պատկերացնել ոլորտին ուղղված ֆինանսական հոսքերի հիմնական ուղղությունները և ակտիվորեն մասնակցել բարձրագույն կրթության քաղաքականությունների ձևավորմանն ու քննարկումներին, նպաստել ավելի տեղեկացված հանրային քննարկումների, փաստարկված առաջարկների և մասնակցային վերահսկողության ձևավորման:

Վերլուծությունը վերաբերում է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության պետական ծրագրերին՝ 2023–2025թթ. կտրվածքով: 2025թ. համար օգտագործվել են նաև տարվա ընթացքում հրապարակված կատարման տվյալներ (9 ամիս)՝ տարվա ընթացիկ կատարողականը գնահատելու համար: Միևնույն ժամանակ, հաշվարկների խորությունն ու համադրելիությունը որոշ դեպքերում սահմանափակվել են միավոր ծախսերի, շահառուների ամբողջական բազաների և ծրագրային մանրամասների հրապարակայնության բացակայությամբ:

Տվյալների աղբյուրներ: Վերլուծությունը հիմնված է պետական մարմինների կողմից հրապարակված փաստաթղթերի և պաշտոնական վիճակագրական տվյալների վրա: Բացի այդ, լրացուցիչ տվյալներ ստացվել են ՀՀ ԿԳՄՄՆ-ին ուղղված պաշտոնական հարցումների միջոցով, ինչը հնարավորություն է տվել ապահովել ավելի ամբողջական պատկեր:

Հիմնական աղբյուրները ներառում են.

- **ՀՀ բյուջետային համակարգի մասին օրենք,** որը պետական բյուջեն ամփոփող և ներկայացնող վերջնական փաստաթուղթն է և բխում է բյուջետային ուղերձից: Կազմվում է ՀՀ կառավարության կողմից՝ ՀՀ ՖՆ և մյուս գերատեսչությունների օժանդակությամբ և ընդունվում՝ ԱԺ կողմից:
- **ՀՀ պետական բյուջեի տարեկան հաշվետվություններ,** որտեղ ներկայացված են բյուջետային հիմնական տեղեկատվության պլանային, ճշտված և փաստացի մակարդակները՝ ըստ համապատասխան ժամանակահատվածի:
- **ՀՀ կառավարության 2025 թվականի բյուջետային ուղերձ-բացատրագիր** - ներկայացնում բարձրագույն կրթության զարգացման և հարկաբյուջետային քաղաքականությունների հիմնական ուղղությունները և կանխատեսումները, որոնք ընկած են պետական բյուջեի մշակման հիմքում: Կազմվում է ՀՀ կառավարության կողմից՝ ՀՀ ՖՆ և մյուս գերատեսչությունների օժանդակությամբ:
- **«Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը»** հաստատելու մասին օրենքը:

Այս աղբյուրներն ապահովել են վերլուծության համար անհրաժեշտ իրավական և քանակական տվյալների ուսումնասիրման և մշակման հիմքը:

Վերլուծության նպատակով ուսումնասիրվել են 2023-ից 2025 թվականների պլանային բյուջետային ցուցանիշները և կատարողական տվյալները: Վերջինս հնարավորություն է տվել գնահատել ծրագրերի իրականացման ընթացիկ առաջընթացը, ինչպես նաև վերլուծել տարվա ավարտին պլանային ցուցանիշների իրացման հավանականությունը:

Բացի ֆինանսական ցուցանիշներից, դիտարկվել են նաև արդյունքային ցուցանիշները՝ պլանային, ճշտված պլանային և փաստացի մակարդակներով՝ գնահատելու դրանց համապատասխանությունը ծրագրերի նպատակներին: Ցուցիչները դասակարգվել են ըստ բնույթի՝ քանակական և որակական, ինչը հնարավորություն է տվել բացահայտել ինչպես ծախսերի արդյունավետությունը, այնպես էլ դրանց ազդեցությունը շահառու խմբերի վրա:

Վերլուծության մեթոդաբանություն: Սույն զեկույցը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության ոլորտում բյուջետային գործընթացների արդյունավետությունն ու թափանցիկությունը գնահատելու նպատակով՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով ոլորտում տվյալների հասանելիությանը, կառավարման մեխանիզմներին և շահառուների մասնակցությանը: Վերլուծությունը ներառում է բյուջետային կառուցվածքի, կատարողական ցուցանիշների ուսումնասիրություն, առկա խնդիրների և բարելավման ուղղությունների ձևակերպում, ինչպես նաև վերլուծական զեկույցի և պարզեցված բյուջեի մշակումը:

Զեկույցի հիմնական նպատակն է բարձրացնել բարձրագույն կրթության ոլորտում բյուջետային գործընթացների թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, ստեղծել գործիքներ հանրային վերահսկողության և մասնակցային գործընթացների համար, ինչպես նաև ձևակերպել առաջարկություններ համակարգային բարեփոխումների համար:

Բարձրագույն կրթության ոլորտում 2023–2025 թվականների բյուջետային ծրագրերի ուսումնասիրության համար կիրառվել են և՛ բովանդակային, և՛

քանակական փոխլրացնող մեթոդներ՝ ապահովելու համար ոլորտային քաղաքականությունների թափանցիկ և ամբողջական գնահատում:

- ***Բովանդակային վերլուծություն***

Բովանդակային վերլուծության շրջանակում՝

- ուսումնասիրվել են պետական բյուջեի համապատասխան ծրագրերում ներառված ռազմավարական նպատակները, առաջնահերթությունները և ակնկալվող արդյունքները,
- վերլուծվել են ԿԳՄՄՆ-ի կողմից ներկայացված ծրագրային միջոցառումները և դրանց համապատասխանությունը բարձրագույն կրթության ոլորտի իրական խնդիրներին,
- մշակվել են առաջարկություններ բարձրագույն կրթության միջոցառումները բարելավելու համար,
- կազմվել է բարձրագույն և հետբուհական կրթության 2025թ. պարզեցված բյուջեն:

- ***Քանակական վերլուծություն***

Քանակական վերլուծությունը հիմնված է ՀՀ Ֆինանսների նախարարության, պետական բյուջեի հաշվետվությունների և պաշտոնական հարցումների միջոցով ստացված տվյալների վրա:

Այն ներառել է.

- ֆինանսական հատկացումների ուսումնասիրություն՝ ըստ ծրագրերի և ենթածրագրերի,
- պլանային, ճշտված և փաստացի ծախսերի համադրություն,
- կատարողական ցուցանիշների վերլուծություն՝ ըստ պլանային և փաստացի տվյալների,
- շահառուների քանակական ցուցանիշների դիտարկում, այդ թվում՝ ուսանողների, կրթօջախների և ոլորտային ներուժի ամրապնդմանն ուղղված միջոցառումների ընդգրկվածությունը,
- ծախսերի բաշխման ուսումնասիրություն՝ ըստ միջոցառումների և նպատակային ուղղությունների՝ գնահատելու համար թե ինչպես են բաշխվել միջոցները և ինչ ազդեցություն են ունեցել արդյունքների վրա:

- ***Որակական վերլուծություն***

Որակական վերլուծություններն իրականացվել են ՀՀ տարբեր բուհերի պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի հետ է ֆոկուս քննարկումների օգնությամբ: Քանի որ որպես այս միջոցառումների իրականացնողներ ու կրողներ, նրանք խորությամբ պատկերցանում են ոլորտում առկա հիմնախնդիրներն ու նաև տիրապետում են զարգացման հնարավոր ուղղություններին:

1. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

2023 թվականի բյուջետավորման քաղաքականությունը ձևավորվել է՝ ղեկավարվելով կառավարության միջնաժամկետ ծրագրային առաջնահերթություններով՝ ուղղված երկրի զարգացման հիմնական ուղղությունների հետևողական իրականացմանը և պետական ֆինանսական ռեսուրսների նպատակային ու արդյունավետ կառավարմանը: Իրականացվել է առաջնորդվելով ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրի և ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թթ. գործունեության միջոցառումների ծրագրի առաջնահերթություններով:

2023 պետական բյուջեի շրջանակներում իրականացվող միջոցառումների հիմնական նպատակն է եղել ներդրումներից բխող տնտեսական զարգացման մոդելի անցնելը, տնտեսության մրցունակության և արտադրողականության աճը:

ՀՀ 2024 թվականի պետական բյուջեն հիմնվում էր ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի դրույթների վրա և ուղղված է այդ ծրագրով և ՀՀ կառավարության կողմից հաստատված ոլորտային ռազմավարություններով, ինչպես նաև ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 29-ի N 1082-Ն որոշմամբ հաստատված ՀՀ 2024-2026թթ. ՄԺԾԾ-ով սահմանված ՀՀ կառավարության նպատակների, առաջնահերթությունների և թիրախների ապահովմանը:

2024թ պետական բյուջեի շրջանակներում իրականացվող միջոցառումների հիմնական նպատակն էր տնտեսության մրցունակության և արտադրողականության աճը:

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեն հիմնվում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրի դրույթների վրա և ուղղված է այդ ծրագրով և ՀՀ կառավարության կողմից հաստատված ոլորտային

ռազմավարություններով, ինչպես նաև ՀՀ կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի N 1064-Ն որոշմամբ հաստատված ՀՀ 2025-2027 թթ. ՄԺԾԾ-ով սահմանված ՀՀ կառավարության նպատակների, առաջնահերթությունների և թիրախների ապահովմանը[1]:



Գծապատկեր 1

Հայաստանի Հանրապետության 2023-2025 թվականների պետական բյուջե

2025 թվականի պետական բյուջեն եկամուտների գծով հաստատվել է 2,837.6 մլրդ դրամ, ծախսերի գծով՝ 3,441.6 մլրդ դրամ և դեֆիցիտի գծով՝ 604 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի համապատասխանաբար 26.1, 31.5 և 5.5 տոկոսը:

Ծախսային քաղաքականությունը կրթության, առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում նախատեսվել է լրացուցիչ նախաձեռնություններ և համակարգային բարեփոխումներ, որոնք ուղղված են մարդկային կապիտալի արդյունավետ զարգացմանը և իրացմանը, իսկ պետական ենթակառուցվածքներում (կրթական և նախակրթական հաստատություններ, ճանապարհներ, ջրամբարներ և այլն) ներդրումներ իրականացնելու միջոցով ֆիզիկական կապիտալի կուտակմանը: 2025 թվականին, ՀՀ կառավարության

ծրագրի առաջնահերթություններին համահունչ, իրականացվում են սոցիալական, կրթական, առողջապահական և ենթակառուցվածքային բնույթի մի շարք կարևոր միջոցառումներ: Դրանք նպատակ են ունեցել ապահովել մի շարք առանցքային թիրախների իրականացում՝ զուգահեռաբար նպաստելով նաև ոլորտային այլ գործընթացների իրագործմանը: Առանցքային թիրախներից են՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձնաց բնակարանային ապահովումն ու սոցիալական ինտեգրումը, ինչպես նաև վաղ մանկության զարգացման համակարգի կատարելագործումը և նախադպրոցական ծառայությունների ցանցի հասանելիության ընդլայնումը:

Պետական քաղաքականության մեծ ուղղություններից մեկը բարձրագույն կրթությունն է: Բարձրագույն մասնագիտական կրթության նպատակը բարձր մասնագիտական որակավորման կադրերի պատրաստումն ու վերաորակավորումն է, միջնակարգ ընդհանուր և միջին մասնագիտական կրթության հիմքի վրա անձի՝ կրթության զարգացման պահանջմունքների բավարարումը:

Բարձրագույն մասնագիտական կրթությունն առնվազն միջնակարգ կրթության հենքի վրա բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի ծրագրերով իրականացվող մասնագիտական կրթություն է:

Բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերը կարող են իրականացվել անընդհատ և (կամ) ընդհատումներով՝ ըստ աստիճանների:

Հայաստանի Հանրապետությունում **«Բարձրագույն եվ հետբուհական մասնագիտական կրթության մասին»** ՀՀ օրենքով սահմանվում է բարձրագույն մասնագիտական կրթության երկաստիճան որակավորման համակարգ՝ բակալավրի և մագիստրոսի որակավորում, ինչպես նաև պահպանվում էր նաև դիպլոմավորված մասնագետի որակավորումը:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերի ուսուցման տևողությունն է՝

1) բակալավրի որակավորման աստիճան ստանալու համար՝ առնվազն 4 տարի, ոստիկանական կամ զինվորական մասնագիտությունների համար՝ առնվազն 3

տարի (ուսումնառությունն ավարտած և ամփոփիչ ատեստավորումն անցած անձանց տրվում է բակալավրի դիպլոմ),
2) դիպլոմավորված մասնագետի որակավորման աստիճան ստանալու համար՝ առնվազն 5 տարի, (ուսումնառությունն ավարտած և ամփոփիչ ատեստավորումն անցած անձանց տրվում է բարձրագույն կրթությամբ մասնագետի դիպլոմ),
3) մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար՝ առնվազն 1 տարի (ուսումնառությունն ավարտած և ամփոփիչ ատեստավորումն անցած անձանց տրվում է մագիստրոսի դիպլոմ),
4) բժշկական մասնագիտությունների համար կրթության տևողությունը սահմանվում է առնվազն 5 տարի՝ անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով, որի արդյունքում շնորհված կրթական աստիճանը հավասարեցվում է մագիստրոսի կրթական աստիճանին:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագիրը չավարտած անձանց տրվում է բարձրագույն ուսումնական հաստատության կամ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության սահմանած նմուշի ակադեմիական տեղեկանք:

Այն մասնագիտությունների ցանկը, որոնցով բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալը չի թույլատրվում հեռակա, հեռավար (դիստանցիոն) կամ դրսեկության (էքստեռնատի) ձևերով, սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2025 թ. սեպտեմբերի 11-ին արդեն վավերացվել է **«Բարձրագույն կրթության եվ գիտության մասին» օրենքը, նոր օրենքով արդեն բաձրագույն կրթութայն որակավորումները հետևյալն են.**

Բարձրագույն կրթության որակավորում (այսուհետ նաև՝ որակավորում)՝ կրթական կամ գիտական աստիճան, որը հավաստում է բարձրագույն կրթության տվյալ աստիճանում կրթական ծրագրի ուսումնառության սահմանված կարգով ավարտը և հաստատվում է համապատասխան դիպլոմով՝

ա. բակալավրի որակավորում՝ կրթական աստիճան, որը հավաստում է բարձրագույն կրթության առաջին մակարդակի կրթական ծրագրի ուսումնառության ավարտը,

բ. մագիստրոսի որակավորում՝ կրթական աստիճան, որը հավաստում է բարձրագույն կրթության երկրորդ մակարդակի կրթական ծրագրի ուսումնառության ավարտը,

գ. դոկտորի որակավորում՝ գիտական աստիճան, որը հավաստում է բարձրագույն կրթության երրորդ մակարդակի կրթական ծրագրի ուսումնառության ավարտը, ներառյալ դոկտորական ատենախոսության պաշտպանությունը:

Բարձրագույն կրթության ոլորտում 2025 թվականին շարունակվել է կրթական համակարգի արդիականացմանն ուղղված բարեփոխումները՝ ապահովելով ուսանողների համար հավասար հնարավորություններ, կրթական ծրագրերի որակի բարձրացում և բուհական կառավարման թափանցիկության աճ: Կախված ոլորտի առաջնահերթություններից՝ ուշադրության կենտրոնում են կրթական ծառայությունների մատչելիության ընդլայնումը, մասնագիտական ուսուցման ծրագրերի արդիականացումը, ոլորտային ֆինանսավորման արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև կրթական գործընթացների թվայնացումն ու միջազգային համագործակցության զարգացման խթանումը:

2023-2025 թվականներին բարձրագույն կրթության ծրագրը պետական քաղաքականությամբ իրականացվել է 14 բյուջետային միջոցառում՝

1. Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայություններ
2. Բարձրագույն կրթության որակի ապահովման ծառայություններ
3. Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի անդամակցությամբ պայմանավորված բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումներ
4. Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ
5. Հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ բուհական հաստատություններում
6. Ասպիրանտական կրթաթոշակներ գիտական հաստատություններում սովորողներին

7. Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում
8. Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում բուհական հաստատություններում
9. Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում գիտակրթական հաստատություններում
10. Երևանում բարձրագույն կրթության հասանելիության ապահովում մարզաբնակ ուսանողներին, կեցության վարձավճարի փոխհատուցում մարզաբնակ և օտարերկրյա ուսանողներին
11. Ուսումնական վարկերի տոկոսավճարների մասնակի փոխհատուցում
12. 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողներին ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրում
13. Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում սովորող ուսանողների ուսման վարձի փոխհատուցում
14. Բարձրագույն ուսումնական հաստատությունների և «Զեյթուն» ուսանողական ավան» հիմնադրամի շենքային պայմանների բարելավում:

2. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ 2023-2025թթ. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի պետական բյուջեի 2023-2025[1] թվականների տվյալների համադրությունը բացահայտում է ֆինանսական զարգացման դինամիկա, որն առանցքային նշանակություն ունի ոլորտային քաղաքականությունների գնահատման և արդյունավետ պլանավորման համար: Երեք տարիների ընթացքում բյուջեն կայունորեն աճել է՝ արտացոլելով ինչպես տնտեսական ակտիվության բարձրացումը, այնպես էլ պետական կարիքների ու ռազմավարական առաջնահերթությունների փոփոխվող շրջանակը: Այդ զարգացումները փաստում են պետական կառավարման համակարգի շարունակական ադապտացիան՝ ուղղված ավելի արդյունավետ, նպատակային և հանրային պահանջներին համահունչ ֆինանսական քաղաքականության իրականացմանը:

Միաժամանակ ԿԳՄՍ նախարարությանը տրամադրվող ֆինանսավորումն էլ զգալի աճ է ապրել, սակայն բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրի հատկացումների դինամիկան նույն համամասնությամբ առաջընթաց չի արձանագրել, ինչն իր հերթին ձևավորում է հակադրություն ոլորտային զարգացման տրամաբանության մեջ:

---

[1]Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն. Պետական բյուջեի տարեկան հաշվետվություններ: Ծախսերն ըստ ծրագրերի և միջոցառումների, փաստացի ցուցանիշներ 2023-2025թթ.:
https://minfin.am/hy/page/hy_hashvetvutyunner
ՀՀ ֆինանսների նախարարություն. Հայաստանի Հանրապետության 2023-2025 թվականների պետական բյուջեի մասին ՀՀ օրենք. Օրենքի հավելվածներ::https://minfin.am/hy/page/petakan_byuje_2025t նաև հեղինակային հաշվարկներ

---

[1] Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ կառավարության 2025 թվականի բյուջետային ուղերձ-բացատրագիր, էջ 8:

https://minfin.am/hy/page/petakan_byuje_2025t



Գծապատկեր 2

Բարձրագույն և հետբուհական կրթության մասնաբաժինը ՀՀ բյուջեում և ԿԳՄՄՆ բյուջեում 2023-2025 թթ.

2023 թվականին Հայաստանի պետական բյուջեի ծախսերը կազմել են **2.59 տրիլիոն դրամ**, ինչն այդ տարվա համար կարևոր ֆինանսական չափորոշիչ էր: Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը տրամադրվել է **250.3 միլիարդ դրամ**, ինչը կազմում է պետական բյուջեի ծախսերի մոտ **9.7%**-ը: Այս հատկացման մեջ ներառված է նաև բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրի ֆինանսավորումը, որը կազմել է **14.04 միլիարդ դրամ,** որը ԿԳՄՄՆ բյուջեի մոտ 5.6%-ն է: Այս հատկացումը հնարավորություն էր տալիս ապահովելու բուհական համակարգի հիմնական գործունեությունը, սակայն ակնհայտ է, որ ոլորտը պահանջում է ավելի համաչափ ու թիրախային ներդրումներ՝ հատկապես որակի, հասանելիության և նորարարական մեխանիզմների զարգացման ուղղությամբ:

2024 թվականին բյուջետային պատկերն արդեն զգալի փոփոխություն էր կրել: Պետական բյուջեի ծախսերը աճել էին և հասել **3.20 տրիլիոն դրամի**, ինչը շուրջ կես տրիլիոնով ավելի էր նախորդ տարվանից: Այս աճը արտահայտվում էր նաև ԿԳՄՄ նախարարության ֆինանսավորման մեջ. նախարարության բյուջեն

զգալիորեն մեծացել և կազմել է **346.5 միլիարդ դրամ, ինչը պետական բյուջեի փաստացի ծախսերի մոտ 10.8%-ն է,** որը ԿԳՄՄՆ բյուջեի մոտ 4.2%-ն է: Այնուամենայնիվ, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրի ֆինանսավորումը, թեև աճել էր՝ հասնելով **14.64 միլիարդ դրամի**, բոլորովին համաչափ չէ նախարարության ընդհանուր բյուջեի աճի տեմպին: Սա վկայում է այն մասին, որ նախարարության ընդհանուր ծախսերի մեծ մասը ուղղվել է այլ ոլորտներին կամ համակարգերին, մինչդեռ բարձրագույն կրթությունը շարունակել է ստանալ համեմատաբար կայուն, բայց քիչ աճող ներդրում՝ ոլորտային կարիքների համեմատ:

2025 թվականին Հայաստանի պետական բյուջեն շարունակել է ընդլայնվել՝ սահմանվելով **3.44 տրիլիոն դրամի** մակարդակում: ԿԳՄՍ նախարարության ֆինանսավորումն այս փուլում նույնպես ավելացել է և կազմել **362.7 միլիարդ դրամ**, ինչը պետական բյուջեի ծախսերի մոտ **10.5%**-ն է և ցույց է տալիս, որ կրթության և մշակույթի ոլորտները շարունակում են մնալ կառավարության ուշադրության կենտրոնում: Սակայն առավել ուշագրավ է այն փաստը, որ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրին հատկացված գումարը 2025 թվականին ոչ թե աճել է, այլ փոքր-ինչ նվազել՝ սահմանվելով **14.16 միլիարդ դրամիորը ԿԳՄՄՆ բյուջեի մոտ 3.9%-ն է**: Սա նվազում է 2024 թվականի համեմատ և փաստում է, որ ոլորտը այդ տարի չի ստացել հավելյալ խթանում, ինչն առավել կարևոր է հատկապես այն պայմաններում, երբ բուհական համակարգը կանգնած է որակի բարձրացման, ծրագրերի արդիականացման և միջազգային մրցունակության բարձրացման անհրաժեշտության առաջ:

Ինչպես երևում է գծապատկերից, 2025 թվականին պետական բյուջեի ծախսերը նախատեսվել են 3,441.6 մլրդ դրամ, ԿԳՄՍ նախարարությանը հատկացվել է 362.7 մլրդ դրամ, ինչը կազմում է պետական բյուջեի ծախսերի մոտ 10.5%-ը: Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրին հատկացվել է 14.16 մլրդ դրամ, որը ԿԳՄՄՆ բյուջեի մոտ 3.9%-ն է:

Ընդհանուր առմամբ՝ 2023-2025 թվականների բյուջետային տվյալների վերլուծությունը ցույց է տալիս հետևյալ պատկերը. պետբյուջեն և ԿԳՄՍ

նախարարության ֆինանսավորումը հետևողականորեն աճել են, սակայն բարձրագույն կրթության ծրագրի ֆինանսավորման աճը համաչափ չի եղել ընդհանուր բյուջետային ընդլայնմանը: Սա կարող է ազդել ոլորտի վերափոխման տեմպերի վրա՝ սահմանափակելով այն հնարավորությունները, որոնք անհրաժեշտ են կրթական ծրագրերի արդիականացման, ուսումնական միջավայրի բարելավման, գիտահետազոտական ներուժի զարգացման և ուսանողների համար առավել մրցունակ միջավայր ձևավորելու համար:

2023-2025 թվականների բյուջետային տվյալների համադրությունը ևս ավելի ընդգծված է դառնում, երբ դիտարկում ենք նաև տոկոսային փոփոխությունները, որոնք թույլ են տալիս հասկանալ՝ իրականում ինչպիսի տեմպերով են զարգացել տարբեր ֆինանսավորման ուղղություններ:

Պետական բյուջեի ծախսային մասի փոփոխությունները ներկայացնենք ստորև

- 2023թ. նկատմամբ 2024 թ. պետական բյուջեի փաստացի ծախսերն աճել են շուրջ 23.6%-ով:
- 2024թ.նկատմամբ 2025 թթ. բյուջեի նախատեսված ծախսերն աճել են ևս մոտ 7.3%-ով:
- Երկու տարում ընդհանուր աճը կազմել է մոտ 32.8%, ինչը բավական բարձր տեմպ է և ցույց է տալիս բյուջետային ծախսերի աճի կայուն միտում:

ԿԳՄՍ նախարարության ծախսային մասի փոփոխությունները ներկայացնենք ստորև.

- 2023 թ. նկատմամբ 2024 թթ. նախարարության փաստացի ծախսերն աճել են մոտ 38.4%:
- 2024թ. նկատմամբ 2025 թթ. պլանավորված աճը կազմել է շուրջ 4.7%:

Երկու տարվա համեմատությամբ ընդհանուր աճը մոտ 44.9% է:

Սա նշանակում է, որ նախարարությանն ուղղված ֆինանսավորումն աճել է ավելի արագ տեմպով, քան պետական բյուջեն ամբողջությամբ, ինչը կարող է վկայել կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտներին առաջնահերթությունը բարձրացնելու միտման մասին:

Այժմ դիտարկենք բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրի փոփոխությունները տոկոսներով

- 2023 թ. նկատմամբ 2024 թթ. ծրագրի ֆինանսավորումը աճել է ընդամենը 4.3%, ինչը շուրջ 33,7%-ով ցածր է նախարարության բյուջեի՝ նույն ժամանակահատվածում գրանցված 38% աճի համեմատ:
- 2024թ. 2025 թթ. այս ծրագրի պլանավորված ֆինանսավորումը նվազել է շուրջ 3.3%:
- Երկու տարվա ընդհանուր արդյունքը կազմում է մոտ 0.8% աճ, այսինքն՝ գրեթե չեզոք փոփոխություն:

Վերլուծությունը հստակ ցույց է տալիս, որ մինչ ընդհանուր պլանային բյուջեն և հատկապես նախարարության ֆինանսավորումը զգալիորեն աճել են, բարձրագույն կրթության ոլորտը չի ստացել համաչափ աջակցություն: 2024-ից 2025 թվականներին գրանցված նվազումը տեղի է ունեցել ֆինանսական ընդհանուր աճի պայմաններում, ինչը փաստում է, որ բարձրագույն կրթության ծրագիրը համեմատաբար ավելի ցածր առաջնահերթություն է ստացել:

Պետական բյուջեի և ԿԳՄՍ նախարարության ֆինանսավորումն աճել են մեծ տեմպերով՝ համապատասխանաբար մոտ 33% և 45% երկու տարվա ընթացքում, մինչդեռ բարձրագույն կրթության ծրագրի աճը եղել է գրեթե զրոյական:

3. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Բյուջետային տարվա ընթացքում կարևոր նշանակություն ունի պետական ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության գնահատումը: Ուստի անդրադառնանք 2025 թվականի 9 ամիսների բարձրագույն կրթության ոլորտի բյուջետային ծրագրերի փաստացի կատարման ցուցանիշներին՝ համեմատելով սկզբնական պլանային կանխատեսումների հետ:

Նախքան առանձին միջոցառումներին անցնելը դիտարկենք ոլորտի ընդհանուր կատարողականը:



Գծապատկեր 3

2025 թվականի ինն ամիսների ընթացքում պետական բյուջեից բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրի ծախսեր

2025 թվականի ինն ամիսների ընթացքում պետական բյուջեից բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրին նախատեսված էր հատկացնել 10.1 մլրդ դրամ՝ 14 բյուջետային միջոցառումների կատարման նպատակով: Փաստացի արդյունքներով ոլորտին տրամադրվել է 8.7 մլրդ դրամ, ինչը շուրջ 1.36 դրամով կամ 13.45% տոկոսով պակաս է նախատեսված ցուցանիշից: Ոլորտի ծախսերի կատարողականը կազմել է 86.5 տոկոս:

Այժմ անդրադառնանք բարձրագույն կրթության ծրագրերին:

Ըստ 2025 թվականի ինն ամիսների հաշվետվության՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրի բյուջեի կառուցվածքը կենտրոնացած է հետևյալ միջոցառումների վրա:



Գծապատկեր 4 .

Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման միջոցառման բյուջե

Ծրագրում ամենաբարձր բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման միջոցառումն է, որին հատկացվել է 6.7 մլրդ դրամ, ինչը 639.1 մլն դրամով կամ 8.7 տոկոսով պակաս է նախատեսված 7.3 մլրդ դրամից:



Գծապատկեր 5

Բարձրագույն և հետբուհական կրթության միջոցառման բյուջե 2025թ. ինը ամիս

Հաջորդ միջոցառումը բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակի միջոցառումն է, որին հատկացվել է 630.8 մլն դրամ՝ 140,7 մլն դրամով կամ 18.23 տոկոսով պակաս է նախատեսված 771.6 մլն դրամ:

Ըստ ինն ամիսների հաշվետվության հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ բուհական հաստատություններում միջոցառմանը պետական բյուջեից հատկացվել է 334.7 մլն դրամ, ինչը 35.1 մլն դրամով կամ 9.48 տոկոսով պակաս է նախատեսված 369.8 մլն դրամ:

Հաջորդ միջոցառումը հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում բուհական հաստատություններում միջոցառումն է, որին հատկացվել է 305.3 մլն դրամ, ինչը նախատեսված 348.9 մլն դրամի՝ ապահովելով 88.5 % կատարողական:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների և «Զեյթուն» ուսանողական ավան» հիմնադրամի շենքային պայմանների բարելավման միջոցառմանը հատկացվել է 233.2 մլն դրամ, ինչը 300.4 մլն դրամով կամ 56.3 տոկոսով պակաս է նախատեսված 533.7 մլն դրամից:

Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայություններ միջոցառմանը 2025թ. ինն ամիսների համար նախատեսվել է 30.2 մլն դրամ նախատեսված 30.2 մլն դրամից, իսկ բարձրագույն կրթության որակի ապահովման ծառայություններ միջոցառմանը նույնպես հատկացվել է 45.0 մլն դրամ նախատեսված 45.0 մլն դրամից: Այս երկու միջոցառումների համար ապահովվել է:

Մյուս միջոցառումը Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի անդամակցությամբ պայմանավորված բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումներ միջոցառումն է որին հատկացվել է 7.3 մլն դրամ, ինչը 24.2 մլն դրամով կամ 76.9 տոկոսով պակաս է նախատեսված 31.5 մլն դրամից:

Ըստ ինն ամիսների կատարողական հաշվետվության ասպիրանտական կրթաթոշակներ գիտական հաստատություններում սովորողներին միջոցառմանը պետական բյուջեից հատկացվել է 31.1 մլն դրամ, ինչը 31.3 մլն դրամով կամ 50.2 տոկով պակաս է նախատեսված 62.3 մլն դրամ:

Հաջորդ միջոցառումը հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում գիտակրթական հաստատություններում միջոցառումն է, որին հատկացվել է 11.3 մլն դրամ, ինչը նախատեսված 24.9 մլն դրամի համեմատ նվազել է 13.6 մլն դրամով կամ 54.7 տոկոսով:

«Երևանում բարձրագույն կրթության հասանելիության ապահովում մարզաբնակ ուսանողներին, կեցության վարձավճարի փոխհատուցում մարզաբնակ և օտարերկրյա ուսանողներին միջոցառման պլանավորված ամբողջ ծախսը՝ 26.3 մլն դրամ նախատեսված 26.3 մլն դրամից:

Ուսումնական վարկերի տոկոսավճարների մասնակի փոխհատուցում միջոցառման կատարողականը նույնպես 100 տոկոս է՝ նախատեսված 49.7 մլն դրամն ամբողջությամբ ծախսվել է:

2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողներին ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրման միջոցառմանը հատկացվել է 176.5 մլն դրամ, ինչը նախատեսված 308.2 մլն դրամի համեմատ 131.7 մլն դրամով պակաս է, այսինքն՝ միջոցառումը կատարվել է 68.2 տոկոսով:

Ըստ 2025թ. ինն ամիսների կատարողական հաշվետվության Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում սովորող ուսանողների ուսման վարձի փոխհատուցում միջոցառմանը պետական բյուջեից հատկացվել է 177.0 մլն դրամ, նախատեսված 178.0 մլն դրամից՝ ապահովելով 99,42 % կատարողական:

2025 թվականի ինն ամիսների բյուջետային ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ ոլորտի ծրագրերի մեծ մասում կա թերակատարման բարձր մակարդակ: Պատճառները կարող են լինել բազմաբնույթ, սակայն պետք է փաստել, որ կատարողական ցուցանիշների ուսումնասիրությունը ցույց է տալիս բուհական համակարգի թերֆինանսավորում՝ պետական բյուջեի ծախսային ցուցանիշների բարձր աճի միտման պայմաններում:

4. 2023-2025ԹԹ. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ինչպես արդեն նշել ենք, այս վերլուծության շրջանակներում ուսումնասիրվել են 2023-2025թթ. բարձրագույն կրթության ոլորտում իրականացված պետական ծրագրերն իրենց նպատակներով, ինչպես նաև վերլուծվել են ՀՀ պետական բյուջեի ելքային ծրագրերի ու միջոցառումների գծով արդյունքային ցուցանիշները՝ համադրելով իրականացված ծախսերի ու արձանագրված արդյունքների հետ:

2023-2025թթ. ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում պետական բյուջեի հատկացումներն ու արդյունքային ցուցանիշներն ամբողջությամբ ներկայացված են հավելված 1-ում: Ստորև անդրադառնանք յուրաքանչյուր միջոցառմանն ու դրանց կատարողականներին:

1. Բարձրագույն կրթության որակի ապահովման ծառայություններ

ՀՀ-ում բարձրագույն կրթության որակի ապահովումն իրականացվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից, այն անկախ կառույց է, որն ստեղծվել է ՀՀ կառավարության 2008թ. նոյեմբերի 27-ի թիվ 1486-Ն որոշմամբ:

Հիմնադրամի 2021-2025 թթ. ռազմավարական ծրագրում ամրագրված են հետևյալ նպատակները.

- Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում,
- ՀՀ-ում փորձագիտական կարողությունների շարունակական զարգացում,
- Շահակիցների հետ նախաձեռնողական (proactive) և շարունակական հաղորդակցում ու համագործակցում,
- Կրթության որակի ձևավորման համար գործող իրավակարգավորումների համահնչության ապահովում,
- Միջազգային լավագույն փորձի և մշակութի տարածում,

- ՈԱԱԿ-ի կարողությունների շարունակական զարգացում՝ կարևորելով սովորող կազմակերպության սկզբունքները, որը բուհերում ապահովվում է ներքին և արտաքին որակ և բարելավման շարունակականություն[2]:

Ուսումնասիրելով 2023-2025 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով տարեկան ճշտված պլանային ցուցանիշները՝ նկատում ենք, որ 2024թ. որակի ապահովման ծառայությունների վրա կատարված ծախսերն աճել են նախորդ տարվա համեմատ 53%-ով՝ կազմելով 112 մլն 672 հազար:

ՀՀ Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվությունում չի երևում այս ծախսի կատարման ուղղությունը: Այն մասամբ արտացոլված է այս հաշվետվության փոփոխումների ու լրացումների վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման մեջ, համաձայն որի, 52 մլն 683 հազար ՀՀ դրամ տրամադրվել է որակի ապահովման ծառայությունների ծրագրին, որի կատարողն է հանդիսացել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտե[3]: Սակայն, այդպես էլ չի նշվում թե հատկապես ինչ ուղղությամբ է ծախսվել այն:

2. Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում

Ուսանողական նպաստը ոչ միայն ֆինանսական աջակցություն է, այլև կրթության քաղաքականության այն գործիքը, որով պետությունը փորձում է հնարավորինս համահարթեցնել առկա անհավասարությունները: ՀՀ- ևս անմասն չի մնում բարձրագույն կրթության մատչելիության ապահովման կարևոր

---

[2] /ՅԴ ՈԱԱԿ 2021-2025 թթ. ռազմավարական ծրագիր 5-10 էջ https://nuaca.am/wp-content/uploads/2021/10/%D5%80%D5%A1%D5%BE%D5%A5%D5%AC%D5%BE%D5%A1%D5%AE-1%E2%80%A41%E2%80%A42-%D5%83%D5%87%D5%80%D4%B1%D5%80-%D5%AB-2021-2025%D5%A9%D5%A9%E2%80%A4-%D5%8C%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80-%D5%BA%D5%AC%D5%A1%D5%B6.pdf

[3] ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2323-Ն որոշման որ 3 եվ 4 հավելվածներում կատարվող փոփոխությունները եվ լրացումներ https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/GVC6-D83F-A26F-8469/1872.2.pdf

գործընթացներից և այդ նպատակով գործում է ուսանողական նպաստների տրամադրման համակարգը, որն առաջադրված է ՀՀ Կառավարության 1183-Ն որոշմամբ: Այս մեխանիզմը համարվում է պետության ամենածավալուն սոցիալական-կրթական գործիքներից մեկը՝ ուղղված կրթության համատարած հասանելիության և սոցիալական հավասարության ապահովմանը:

Կարգի համաձայն՝ պետությունը ուսանողներին տրամադրում է ուսման վճարի ամբողջական կամ մասնակի փոխհատուցում՝ հիմնվելով ինչպես նրանց սոցիալական վիճակի, այնպես էլ առաջադիմության վրա: Այսպիսով, նպաստների տրամադրումը ոչ միայն աջակցում է խոցելի խմբերին, այլև խթանում է ուսման բարձր արդյունքները՝ ապահովելով, որ սոցիալ-տնտեսական դժվարությունները չդառնան բարձրագույն կրթությանը խոչընդոտ:

- սոցիալապես խոցելի խավերի հասանելիություն դպրոցից դեպի բուհ,
- մարզերի ու Երևանի կրթական անհավասարությունը,
- հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրում,
- զինծառայողների և զոհված զինծառայողների ընտանիքների կրթական իրավունքների պաշտպանություն:

Այսպիսով, նպաստի տրամադրումը ոչ միայն սոցիալական աջակցություն է, այլև հիմնարար իրավունքի իրականացում՝ կրթության իրավունքի:

Կարգով սահմանվում է երեք խումբ, որոնք ստանում են **լրիվ փոխհատուցում**.

1. **Առաջադիմությամբ ընտրված ուսանողները**՝ մրցույթի կարգով:
2. **Սոցիալական հատուկ խմբեր**, ներառյալ

- առանց ծնողական խնամքի մնացած երեխաները,
- հաշմանդամություն ունեցող ուսանողները,
- զոհված/մահացած զինծառայողների 27 տարեկանից ցածր զավակները,
- զինծառայության ընթացքում հաշմանդամ դարձած անձինք:

3. **Պահանջված և առաջնահերթ մասնագիտությունների ուսանողները**, որոնք ընդունվել են նպատակային կրթությամբ:

Այս երեք խումբը ներկայացնում են պետության առաջնահերթությունները.

- մրցակցային որակ,
  սոցիալական պաշտպանություն,
- տնտեսական պահանջարկ և ազգային անվտանգությանը կարևոր
  մասնագիտություններ:

Կարգի ամենաբարդ և կարևոր ենթահամակարգերից է **մասնակի փոխհատուցման ինստիտուտը**, որը կախված է ուսանողի ընտանիքի անապահովության աստիճանից:

Հավելված 1-ի տվյալները ցույց են տալիս, որ 2024 թ. 2023թ. նկատմամբ այս միջոցառման ծախսը նվազել է 5,5%-ով, իսկ նպաստներ ստացող ուսանողների թիվն ավելացել է 5 %-ով: Ուսումնասիրելով 2023-2024 թթ ՀՀ պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվությունները կարող ենք արձանագրել, որ բոլոր թվականներին էլ առկա է պլանային և փաստացի ցուցանիշների շեղում, որն պայմանավորված է ուսանողների թվաքանակի փոփոխությամբ: Վերջինս էլ իր հերթին պայմանավորված է մի շարք գործոններով այդ թվում՝ նպաստների տրամադրման համար կան տարբեր սանդղակներ և յուրաքանչյուր կիսամյակ հնարավոր է ցուցանիշը փոփոխվել, ինչպես նաև նույն ուսանողը տարբեր կիսամյակներում կարող է տարբեր չափի նպաստ ստանա:

3. Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ

Պետական կրթաթոշակները Հայաստանի կրթական համակարգում ծառայում են որպես խրախուսական և աջակցող միջոց՝ նպաստելով մրցակցային միջավայրի ստեղծմանը, ուսանողական ակտիվության բարձրացմանը և կրթության որակի ամրապնդմանը. դրանք տրամադրվում են գերազանց առաջադիմություն ցուցաբերող ուսանողների, գիտական աշխատություններում կամ հանրային նախաձեռնություններում աչքի ընկած երիտասարդների և այն ուսանողների համար, ովքեր իրենց վարքով և մասնակցությամբ խթանում են բուհի ակադեմիական կյանքի որակը: Պետական կրթաթոշակի էությունը դրանում է, որ այն ոչ թե ուղղակիորեն սոցիալական աջակցության աղբյուր է, այլ

ակադեմիական խթան, այն նպաստում է ուսանողի շարունակական առաջադիմությանը, աջակցում է մրցունակ մասնագետների ձևավորմանը, պաշտպանում է կրթության որակի չափորոշիչները և նպաստում է ներբուհական առողջ մրցակցային մթնոլորտի ստեղծմանը: Այդպիսով կրթաթոշակն մի կարևոր գործիք է՝ որը ոչ միայն միտված է անհատական հաջողություններին, այլև ունի համակարգային նշանակություն՝ բարձրագույն կրթության ընդհանուր մակարդակի բարձրացման և գիտական ներուժի կայացման համայնքային հենքեր ապահովելու առումով:

Կրթաթոշակների տրամադրման կարգը սահմանում է երեք կենսական չափանիշ՝ ուսանողի ակադեմիական առաջադիմությունը, նրա հասարակական ներգրավվածությունը և պատշաճ վարքագիծը այս հատկանիշների համադրությամբ բուհերը կազմում են պարգևատրվողների վերջնական ցուցակները: Առաջադիմության բաղադրիչն ընդգրկում է նաև գիտական հոդվածների հրապարակումը, մասնակցությունը օլիմպիադաներին և ուսանողական գիտական նստաշրջաններին, ինչպես նաև այլ տեսակի գիտափորձարկումներ, որոնք վկայում են ուսանողի գիտական եռանդի և ստեղծագործության մասին: Հասարակական ներգրավվածության փոխհատուցման հարթությունը ընդգրկում է ուսանողի ակտիվությունը ֆակուլտետային և բուհային կյանքում, նրա մասնակցությունը համալսարանական նախաձեռնություններին և հանրային գործընթացներին, ինչն առկայության դեպքում համարվում է հավելյալ արժանավորություն՝ կրթաթոշակի տրամադրման հարցում: Պատշաճ վարքագիծը, որը հասկանում է բուհի կանոնների պահպանումը և ուսումնական կարգապահությունը, ապահովում է, որ կրթաթոշակը ստացողները չեն սահմանափակվում միայն վերականգնողական՝ կրթական տարբեր պարտադիր պահանջներով, այլ նաև հանդիսանում են խրախուսման և օրինակելի վարքի կրողներ:

2023թ. այս ուղղության վրա կատարված ծախսերը կազմել են 685 մլն 792 հազար՝ 10 365 ուսանողների համար, իսկ 2024 թ. ծրագրային ծախսերն աճել են՝ հասնելով 862 մլն 013 հազարի, սակայն կրթաթոշակ ստացող ուսանողների թիվը կրճատվել է մարդ 9320: Վերջինս հիմնականում պայմանավորված է պետության

կողմից ԲՏՃՄ ուղղություններով մասնագիտական մանկավարժության ծրագրով սովորողների խրախուսման ծրագրով, համաձայն որի այս ուղղություններով սովորող ուսանողներին հատկացվում է ամսական 70 000 ՀՀ դրամ: Իսկ 2025թ նկատվում է հակառակ պատկերը, կրթաթոշակ ստացող ուսանողների թվաքանակն ուղեկցվում է ընդհանուր ծախսերը նվազեցմամբ: Հարկ է նշել, որ շարունակվել է 2024-2025թթ. ԲՏՃՄ ուղղություններով մասնագիտական մանկավարժական խրախուսման ծրագիրը, ավելին՝ այս ուղղություններով ընդունվածների թիվն ավելացել է 20 տոկոսով[4]:

4. Հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակը

Այս ծրագրի արդյունքային ցուցանիշներն ուսումնասիրելիս տեսնում ենք, որ 2024թ. ըստ ճշտված պլանային ցուցանիշների ծրագրին հատկացումները նախորդ տարվա համեմատ նվազել են 12%-ով, իսկ շահառուների քանակը՝ 8,8%-ով:

5. Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում բուհական հաստատություններում

Հայաստանի Հանրապետության «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի 1–3-րդ հոդվածներով սահմանվում են այն իրավական և կազմակերպական շրջանակները, որոնց ներքո ձևավորվում է թե՛ բարձրագույն, և թե՛ հետբուհական մասնագիտական կրթության ամբողջ համակարգը: Այս համակարգը ներառում է նաև այն ծրագրերը, որոնք ուղղված են ուսանողների և հետբուհական կրթական աստիճան ձեռք բերելու ուղին ընտրած անձանց սոցիալական, ակադեմիական կամ մասնագիտական խրախուսմանը: Այդ ծրագրերից մեկը էապես կարևոր է հատկապես գիտական կադրերի կայացման, երիտասարդ հետազոտողների ներգրավման և գիտակրթական միջավայրի շարունակական զարգացման համար. այն է՝ հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրումը բուհական հաստատություններում:

---

[4] Հղում ՀՀ կրթության մինչև 2030թ. պետական զարգացման ծրագիր 2024թ առաջընթացի հաշվետվություն 27 էջ:

Ծրագիրը գործում է օրենքներով և կառավարության տարեկան բյուջետային որոշումներով և նպատակ ունի ապահովել ասպիրանտուրայում և հայցորդությամբ զբաղվող անձանց նվազագույն սոցիալական և ֆինանսական աջակցություն՝ ուսումնառության և հետազոտական գործունեության ընթացքում: «Ասպիրանտ», «դոկտորանտ» և «հայցորդ» հասկացությունները օրենքով հստակ սահմանված են և ընդգրկում են հետբուհական կրթության իրավաբանական սուբյեկտներին, որոնք կարող են դառնալ նպաստների շահառուներ:

Նպաստները տրամադրվում են ոչ միայն ուսման վարձի բեռը թեթևացնելու, այլ նաև երիտասարդ գիտնականներին հետազոտական աշխատանքում ներգրավելու, գիտակրթական ներուժը զարգացնելու և մասնագետների արտահոսքը կանխելու համար: Ուսումնառության և հետազոտությունների ընթացքում ֆինանսական կայունությունը ապահովում է, որ ասպիրանտներն ու հայցորդները կարողանան կենտրոնանալ գիտական գործունեության վրա՝ առանց սոցիալական ճնշման:

Նպաստների տրամադրումը ներառում է մի քանի բաղադրիչ. պետությունը սահմանում է տարեկան գումարային հատկացումները, որոնք բուհերն ու գիտահետազոտական հաստատությունները բաշխում են ուսանողների, ասպիրանտների և հայցորդների թվից, առաջադիմությունից և ատեստավորման արդյունքներից ելնելով: Ակադեմիական չափանիշների հիման վրա սահմանված սոցիալական աջակցությունը խրախուսում է այն ուսանողներին, ովքեր ակտիվորեն ներգրավված են գիտահետազոտական գործընթացներում:

Ապահովված ֆինանսական միջավայրը բարելավում է ատենախոսությունների ժամանակին ավարտը, ուժեղացնում բուհերի գիտական ներուժը և բարձրացնում հետբուհական կրթության գրավչությունը: Նպաստների համակարգը նաև թույլ է տալիս մասնագետներին շարունակել իրենց կրթությունն ու կատարելագործել հմտությունները, ինչը ներդրում է երկրի գիտական, նորարարական և տնտեսական զարգացման մեջ:

Վերլուծելով աղյուսակի ցուցանիշները՝ տեսնում ենք, որ 2024 թ ծախսերի աճը զուգակցվում է շահառուների թվաքանակի նվազեցմամբ, իսկ 2025 թ. նկատվում է հակառակ միտումը, համաձայն պլանային ճշտված ցուցանիշի

նախորդ տարվա հատկացումների 59,6%-ի կրճատման ֆոնին 59, 6% -ով ավելացել է շահառուների թիվը:

6.Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայություններ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2005 թվականի մարտի 31-ի N 699-Ն որոշմամբ հիմնել է «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն» հիմնադրամը՝ որպես ոչ առևտրային կազմակերպություն կրթության ոլորտում հանրօգուտ նպատակների իրականացման համար:

Հիմնադրամի գործունեության համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վավերացված 1997 թվականի Լիսաբոնի եվրոպական տարածաշրջանի բարձրագույն կրթական որակավորումների ճանաչման կոնվենցիայի 4-րդ հոդվածի 4-րդ ու 9-րդ հոդվածի 2-րդ մասերի դրույթները, ինչպես նաև «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ ու 5-րդ հոդվածների 1-ին մասերի 5-րդ կետերի և 20-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Վերլուծելով այս ծրագիրը տեսնում ենք, որ առանձնակի շեղումներ չկան ճշտված պլանային և փաստացի ցուցանիշների միջև:

7. Երևանում բարձրագույն կրթության հասանելիության ապահովում մարզաբնակ ուսանողներին, կեցության վարձավճարի փոխհատուցում մարզաբնակ և օտարերկրյա ուսանողներին ծրագրի շրջանակներում

«Երևանում բարձրագույն կրթության հասանելիության ապահովում մարզաբնակ ուսանողներին, կեցության վարձավճարի փոխհատուցում մարզաբնակ և օտարերկրյա ուսանողներին» ծրագրի նպատակն է ուսանողներին զեղչային գներով հանրակացարանային պայմանների տրամադրում:

Ծրագրի շահառու կարող են հանդիսանալ Երևան քաղաքի բուհերում ուսումնառող Հայաստանի Հանրապետության մարզաբնակ և օտարերկրյա ուսանողներն ու ասպիրանտները (օրդինատորները), ինչպես նաև միջպետական

համաձայնագրով բարձրագույն և հետբուհական կրթություն ստացող ուսանողները (այսուհետ՝ ուսանողներ):

Ծրագրի իրականացման նպատակով կազմակերպության և նախարարության միջև յուրաքանչյուր տարի կնքվում է համապատասխան պայմանագիր, որով սահմանվում է ծրագրի շրջանակներում կազմակերպությանը փոխհատուցվող գումարի առավելագույն չափը, ծրագրից օգտվող ուսանողների առվելագույն թիվը, կեցության ծառայություններին ներկայացվող նվազագույն պահանջները, կազմակերպության կողմից տրամադրվելիք զեղչերով տեղերի առավելագույն քանակը և այլն:

Ծրագիրը ներդրվել է 2019 թ., որի նպատակն է ուսանողներին զեղչային գներով հանրակացարանային պայմանների տրամադրում:

Այս միջոցառման մեջ պլանային և ճասռացի ցուցանիշների միջև կարելի է ասել գրեթե շեղում չկա:

Այս ծրագրի փաստացի ծախսերը 2024թ. 2023թ. նկատմամբ նվազել են 7,5 %-ով, իսկ հանրակացարանում բնակվող ուսանողների թիվը նվազել է 11.2%-ով::

8. Ուսումնական վարկերի տոկոսավճարների մասնակի փոխհատուցում ծրագրով :

Ուսանողական վարկերը տրամադրվում են ՀՀ քաղաքացիներին՝ պետական կամ հավատարմագրված ԲՈՒՀ-երի բակալավրիատ և մագիստրատուրա ուսանողների ուսման վարձի համար՝ ծնողների կամ խնամակալների երաշխավորությամբ, մինչև 10 տարի ժամկետով: Ուսումնառության ընթացքում մարվում են միայն տոկոսները, ավարտից հետո՝ մայր գումարի և տոկոսների հավասարաչափ մարումներ: Տոկոսադրույքը 9% է, որը պետությունը սուբսիդավորում է 2–3%:

Վարկի առավելագույն գումարը 4 մլն դրամ է (առավելագույն 5 մասնաբաժին, մեկի չափը՝ մինչև 800 000 դրամ): Վարկը տրամադրվում է անմիջապես ուսումնական հաստատությանը, ամսական անուիտետային վճարներով, առանց լրացուցիչ վճարների: Տոկոսները հաշվարկվում են մնացորդի նկատմամբ, ապահովությունը՝ երաշխավորություն: Վարկառուն պետք է լինի վարկունակ, առանց չաշխատող պարտավորությունների, գերազանց ուսումնառության

դեպքում նշվում է ուսման արդյունքը: Վարկը ներկայացվում է վերաֆինանսավորման մեկ ամսվա ընթացքում, համապատասխանում է Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման մասին օրենքներին:

2023 թ նախատեսված է եղել վճարելու 17533 ուսանողների վարկերի տոկոսավճարներ, սակայն ծրագրից փաստացի օգտվել են 9097 ուսանող, որոնց վարկերի տոկոսավճարների գումարը պետության համար հանդիսացել է 74 մլն 189 հազար ՀՀ դրամ, իսկ 2024 թվականին կտրուկ նվազել են ծախսերը՝ 31 մլն 993 հազար դրամ 23100 :

9. Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում սովորող ուսանողների ուսման վարձի փոխհատուցում

ՀՀ կառավարությունը 2023 թվականի հոկտեմբերի 12-ին հաստատել է կարգ, որը նախատեսում է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսանողների ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով կրթաթոշակ տրամադրելու գործընթացը: Կարգը տարածվում է 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղի նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերում առկա և հեռակա ուսուցմամբ սովորող ուսանողների վրա, որոնք իրենց ուսման շարունակությունը շարունակում են Հայաստանի Հանրապետության պետական ուսումնական հաստատություններում: Կարգը նախատեսում է նաև, որ կրթաթոշակները տրամադրվում են միայն 2023-2024 ուսումնական տարվա համար:

Կրթաթոշակի չափը որոշվում է ուսանողի ընտրված կրթական ծրագրի համար սահմանված ուսման վարձի հիման վրա, բայց չի կարող գերազանցել առավելագույն սահմանված չափերը, իսկ մագիստրատուրայի ուսուցման ծրագրերի դեպքում սահմանվում է 560 հազար դրամ: Կրթաթոշակին հավակնող ուսանողները պետք է դիմեն ուսումնական հաստատություն, որը կազմի շահառուների անվանացանկ՝ ներառելով ուսանողի նույնականացման տվյալները, տեղեկատվություն տեղափոխված և նախնական կրթական ծրագրերի,

մասնագիտության և դասընթացի վերաբերյալ, ինչպես նաև կրթական աստիճանը, կուրսը և ուսուցման ձևը: Անվանացանկերը փոխանցվում են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը՝ ստուգման և համադրության համար: Այս գործընթացում տվյալները համադրվում են Միասնական սոցիալական ծառայության գրանցամատյանների և Լեռնային Ղարաբաղի համապատասխան ուսումնական հաստատություններից ստացված տեղեկությունների հետ, որպեսզի ճշգրտվեն կամ լրացվեն անհրաժեշտ տվյալները:

Ուսանողին հատկացվող ֆինանսական միջոցները ուսումնական հաստատություններին տրամադրվում են նվիրատվության պայմանագրերի կամ համապատասխան համաձայնագրերի հիման վրա, հիմնվելով ուսումնական հաստատությունների կողմից նախարարությանը ներկայացված և նախարարության կողմից ճշտված անվանացանկերի վրա: Ուսանողը և ուսումնական հաստատությունը կնքում են պայմանագիր՝ կրթաթոշակի միջոցներով ուսման վարձի փոխհատուցման մասին: Կարգը նաև ապահովում է, որ ուսումնառությունը ընդհատած ուսանողը՝ օրինակ, պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու, առողջական խնդիրների, հղիության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդի պատճառով, վերականգնվելիս պահպանել է կրթաթոշակ ստանալու իր իրավունքը:

Կարգն ընդգրկում է նաև հատուկ դրույթներ այն ուսանողների համար, որոնք ուսման ընթացքում տեղափոխվել են ընդունող ուսումնական հաստատություններ՝ Հայաստանի տարբեր քաղաքներում, և թույլ է տալիս նրանց անհատական ժամանակացույցով կամ ուսումնական հաստատության սահմանած կարգով շարունակել ուսումը՝ պահպանելով կրթաթոշակ ստանալու իրավունքը: Սա ապահովում է, որ բռնի տեղահանված ուսանողները չզրկվեն ուսումնական հնարավորություններից, անկախ նրանց տեղաշարժից և դասընթացների առանձնահատկություններից:

Այս կարգը նաև արտացոլում է կառավարության հավաստի քաղաքականությունը՝ աջակցել սոցիալապես խոցելի խմբերին, հատկապես այն անձանց, ովքեր բռնի տեղահանվել են Լեռնային Ղարաբաղից, և ցուցաբերում է պետական

պատրաստակամություն՝ շարունակական կրթության ապահովման և համահայկական կրթական ծրագրերի մատչելիության բարձրացման ուղղությամբ: Կրթաթոշակների տրամադրման գործընթացը համակարգվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից՝ ապահովելով ֆինանսական միջոցների նպատակային, ժամանակին և արդյունավետ օգտագործում, ինչպես նաև լրացուցիչ վերահսկողություն՝ հասանելիությունը և արդարությունը պահպանելու նպատակով:

10. Բարձրագույն ուսումնական հաստատությունների և «Զեյթուն» ուսանողական ավան» հիմնադրամի նյութատեխնիկական բազայի համալրում և գույքով ապահովում

2024 թվականին ԲՈՒՀ-երի և «Զեյթուն» ուսանողական ավանի շենքային պայմանների բարելավման ֆինանսավորումը 2023-ի համեմատ աճել է մոտ **285%**-ով (մոտ **3.85 անգամ**), սակայն արդյունքի չափորոշիչը ներկայացված է ընդամենը «1 կազմակերպություն» ձևաչափով, ինչը չի ապահովում ազդեցության գնահատելիություն:

11. Ասպիրանտական կրթաթոշակներ գիտական հաստատություններում սովորողներին

Մրցութային կարգով ասպիրանտուրա են ընդունվում մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան, իսկ բժշկական մասնագիտություններով՝ բժշկի որակավորում, կլինիկական ուղղվածությամբ բժշկական մասնագիտությունների դեպքում՝ բժիշկ-մասնագետի որակավորում ունեցողները:Ասպիրանտուրա ընդունվում է մասնագիտական քննությունից առավելագույն միավոր ստացած անձը:Առկա ուսուցման ձևով և անվճար հիմունքներով ասպիրանտուրա ընդունվածներին տրվում է սահմանված չափի պետական կրթաթոշակ՝ ընդունման օրվանից:

Ինչպես երևում է տվյալներից՝ ասպիրանտական կրթաթոշակների միջոցառման (գիտական հաստատություններում սովորողների համար) 2023–2025թթ. տվյալները նկարագրում են հետաքրքիր, բայց նաև մտահոգիչ միտում. **ֆինանսավորումը նվազում է, մինչդեռ շահառուների թիվը աճում է**:

2023 թվականին ծրագրի փաստացի ֆինանսավորումը կազմել է 55.27 մլն դրամ, իսկ կրթաթոշակ ստացողների թիվը՝ 73 մարդ: 2024 թվականին ֆինանսավորումը փոքր-ինչ կրճատվել է՝ հասնելով 53.21 մլն դրամի, բայց շահառուների թիվը փոքր աճ է գրանցել՝ 75 մարդ: Այս փուլում արդեն նկատվում է, որ համակարգը փորձում է պահպանել կամ ընդլայնել ընդգրկվածությունը:

11. Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում գիտակրթական հաստատություններում

Այս ծրագրով պլանային և փաստացի շեղումներն աննկատ են, սակայն նկատվում է թե հատկացումների, թե շահառուների բացասական դինամիկա՝ 2024 . փաստացի ճշտված տվյալներով ծրագրին նախատեսված հատկացումները նվազել են 45, 8 % -ով , իսկ շահառուների քանակը՝ 75, 8 –ով:

12. 2023 թվականի սեպտեմբերի 19-ից_հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողներին ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրում

2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված Լեռնային Ղարաբաղում նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացրած ուսումնական հաստատությունների առկա և հեռակա ուսուցման համակարգի ուսանողների և Հայաստանի Հանրապետությունում գործող նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական, բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում կամ կազմակերպություններում (այսուհետ՝ ՈՒՀ) առկա կամ հեռակա ուսուցմամբ վճարովի համակարգ հրամանագրված ուսանողներին (այսուհետ՝ ուսանող) ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրման գործընթացը:

Կրթաթոշակի տարեկան չափը որոշվում է՝ հիմք ընդունելով ՈՒՀ-ի համապատասխան մասնագիտության (կրթական ծրագրերի) համար սահմանված վարձի չափը, սակայն չի կարող գերազանցել համապատասխան մասնագիտության (կրթական ծրագրերի) համար NN 2 և 3 հավելվածներով

սահմանված առավելագույն չափը, իսկ մագիստրոսի կրթական ծրագրերում՝ 560 հազ. դրամը:

Հավելված 1 - ի տվյալները ցույց են տալիս, որ ԼՂ-ից **բռնի** տեղահանված և ՀՀ-ում բարձրագույն կրթություն ստացող ուսանողների ուսման վարձի փոխհատուցման կրթաթոշակային միջոցառումը 2023–2025թթ. ունեցել է **սուր տատանողական ֆինանսավորում**: 2024 թվականին հատկացումները էապես աճել են՝ 440 մլն դրամից հասնելով 753 մլն դրամի, սակայն 2025 թվականին տեղի է ունեցել **կտրուկ անկում**՝ մինչև 254 մլն դրամ,

2023–2025թթ. բարձրագույն կրթության բյուջետային միջոցառումների վերլուծությունը ցույց է տալիս, որ ֆինանսավորումը մի շարք ուղղություններով աճել կամ պահպանվել է, սակայն արդյունքների դինամիկան միշտ չէ, որ համաչափ է եղել ծախսերի փոփոխությանը: Որակի ապահովման ծառայություններում 2024-ին ծախսերի էական աճը հիմնականում կապվել է նոր համակարգի ներդրման հետ, իսկ 2025-ին՝ ծախսերի կրճատման ֆոնին արձանագրվել է որոշ արդյունքային ցուցանիշների աճ, ինչը մատնանշում է արդյունավետության պոտենցիալ բարձրացում կամ ծախսերի օպտիմալացում: Միաժամանակ, ուսանողական նպաստների, կրթաթոշակների և հետբուհական աջակցության ծրագրերում նկատվում են հակասական միտումներ՝ որոշ դեպքերում շահառուների թվի աճ՝ նվազող ֆինանսավորման պայմաններում, ինչը հավանականորեն բերել է մեկ շահառուի հաշվով աջակցության նվազման կամ հաշվառման/կարգավորման փոփոխությունների: Վերջապես, սոցիալական աջակցության հատուկ ծրագրերում (մարզաբնակների կեցության փոխհատուցում, ԼՂ-ից բռնի տեղահանվածների ուսման վարձի փոխհատուցում) ֆինանսավորումը դրսևորել է տատանողականություն, և մի շարք դեպքերում արդյունքների կառուցվածքային տվյալների բացակայությունը սահմանափակում է ազդեցության լիարժեք գնահատումը՝ պահանջելով տվյալների մանրամասնեցում և հաշվետվողականության բարելավում:

13. Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի անդամակցությամբ պայմանավորված բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումներ:

ՀՀ-ն անդամակցելով Բոլոնիայի գործընթացին՝ պարտավորություն է հանձն առել իրականացնել բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստագրում Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի որակավորումների շրջանակի նկատմամբ:

Բոլոնիայի հռչակագրին միանալու արդյունքում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների շրջանակը հաշվի առնելով՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 12 փետրվարի 2024 թ. թիվ 158-Ա հրամանով հաստատվել են Բոլոնիայի գործընթացի հետամուտ և աշխատանքային խմբերի կազմերը:

Հետամուտ խմբի նպատակներից է, ի թիվս այլնի, ձեռնարկել միջոցներ բարձրագույն կրթության ոլորտում ՀՀ ԿԳՄՍ նախարարության որդեգրած քաղաքականության սկզբունքներին համահունչ Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի լավագույն փորձի համապատասխանեցման, ինչպես նաև եվրոպական գործընկերներին Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության ոլորտի ձեռքբերումների հաջողված փորձի ներկայացման ուղղությամբ:

2025 թ. ինն ամսվա ընթացքում այս միջոցառմանը հատկացվել է 7մլն 276 ՀՀ հազար դրամ:

5. ԲՈՒՀԵՐԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ և ՎԱՐՉԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՖՈԿՈՒՍ ԽՄԲԵՐԻ ՀԵՏ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հետազոտությունն ավելի համակողմանի և ընդգրկուն իրականացնելու նպատակով թիմը կիրառել է որակական մոտեցում՝ տարբեր բուհերի պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի մասնակցությամբ ֆոկուս քննարկումների միջոցով համակարգված կերպով բացահայտելով բարձրագույն կրթության ոլորտում առկա խոչընդոտները, հնարավորությունների դաշտը և զարգացման ուղենիշները: Քննարկումներից ստացված դիրքորոշումները և դիտարկումները մշակվել են վերլուծական տրամաբանությամբ՝ թեմատիկ խմբավորմամբ առանձնացնելով հիմնախնդիրների հիմնական շերտերը և դրանց հասցեագրման առաջարկվող ուղղությունները:

Քննարկումների առանցքային թեմաներից մեկը հավատարմագրման և որակի ապահովման գործընթացների գործնական իրագործելիությունն էր: Բուհերի ներկայացուցիչների ընկալմամբ՝ հավատարմագրումը միաժամանակ դիտարկվում է որպես որակի բարձրացման անհրաժեշտ ու համակարգաստեղծ գործիք և որպես էական ֆինանսական ու կառավարչական բեռ ստեղծող գործընթաց: Օրենսդրական փոփոխությունների արդյունքում ծրագրային հավատարմագրման պարտադիր դառնալը բազմապատկում է բուհերի աշխատանքային ծավալը՝ հատկապես այն հաստատություններում, որտեղ բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի փաթեթը լայն է: Այս պայմաններում հավատարմագրման արդյունավետ կազմակերպումը պահանջում է ոչ միայն ներքին որակի ապահովման ստորաբաժանումների ուժեղացում, այլև շարունակական տվյալների հավաքում, ներքին մոնիթորինգ, արտաքին փորձագիտական ներգրավում և խորհրդատվական աջակցություն, որոնք

մեծամասամբ ենթադրում են լրացուցիչ ծախսեր: Քննարկման մասնակիցների գնահատմամբ՝ պետական աջակցության ներկայիս մակարդակը բավարար չէ այդ բեռը հավասարակշռելու համար, ինչի հետևանքով բուհերը հաճախ ստիպված են խնդիրը լուծել սահմանափակ արտաբյուջետային միջոցներով՝ սահմանելով առաջնահերթություններ ոչ թե զարգացման տրամաբանությամբ, այլ առկա ռեսուրսի կոշտ սահմանափակմամբ:

Միաժամանակ, առանձնահատուկ ընդգծվել է գործընթացի մարդկային և կազմակերպական բաղադրիչը: Նշվել է, որ հավատարմագրման հաջողությունը կախված է ոչ միայն փաստաթղթերի որակից, այլ նաև ներգրավված դերակատարների պատրաստվածությունից և մոտիվացիայից: Դասախոսների և ուսանողների շրջանում հաճախ առկա է գործընթացի էության թերի ընկալում, մասնակցության նկատմամբ ցածր հետաքրքրվածություն, ինչպես նաև բուհի վիճակի ներկայացման սուբյեկտիվ մոտեցումներ, որոնք կարող են ազդել արտաքին գնահատողների մոտ ձևավորվող ընդհանուր պատկերի ամբողջականության վրա: Այդ համատեքստում հավելյալ խնդիր է դիտարկվում դասախոսների ծանրաբեռնվածության աճը՝ պայմանավորված ուսումնական ծրագրերի նկարագրությունների մանրամասնեցմամբ, գնահատման գործիքների մշակմամբ և հիմնավորմամբ, ինչը, սակայն, միշտ չէ, որ արտացոլվում է աշխատանքային պայմանագրերում կամ ուղեկցվում է լրացուցիչ վարձատրությամբ: Արդյունքում ձևավորվում են մոտիվացիոն ռիսկեր, որոնք կարող են սահմանափակել որակի ապահովման մշակույթի իրական արմատավորումը:

Քննարկումների ընթացքում առանձնացվել է նաև կառավարման և տվյալների ենթակառուցվածքի համակարգային բացը: Բուհերը նշում են միասնական և ստանդարտացված տեղեկատվական բազայի բացակայությունը, որը թույլ կտար համադրելի և թափանցիկ ձևով դիտարկել հիմնական ցուցանիշները՝ ուսանող/դասախոս հարաբերակցություն, շրջանավարտների հետագիծ, կրթական ծրագրերի արդյունավետության չափումներ և այլ գործնական կատարողականոթյան ցուցիչներ: Այս բացը սահմանափակում է ոչ միայն ներքին կառավարման որակը, այլ նաև պետական քաղաքականության մակարդակում

արդյունքահեն որոշումների կայացման հնարավորությունը՝ ֆինանսավորման և խրախուսման մեխանիզմների նպատակային ճշգրտման տեսանկյունից:

Ուսանողական նպաստների և կրթաթոշակների համակարգի վերաբերյալ քննարկումները ցույց են տալիս, որ գործող շեմային պահանջները միշտ չէ, որ համարժեք են արտացոլում սոցիալական և կենսագրական տարբեր հանգամանքները: Առանձնապես ընդգծվել է հատուկ խմբերի՝ օրինակ պատերազմի մասնակցություն ունեցող ուսանողների պարագայում, ակադեմիական միջին ցուցանիշի պահանջի ճկունեցման մոտեցումը՝ նպաստի կայունությունն ապահովելու տրամաբանությամբ, որպեսզի աջակցությունը չդառնա կարճաժամկետ առաջադիմական տատանումներից կախված: Միաժամանակ արձանագրվել է նաև հակադիր դիրքորոշում, ըստ որի նվազագույն ակադեմիական շեմի առկայությունը դիտարկվում է որպես համակարգային արդարության և պատասխանատվության պահպանման պայման: Բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների պարագայում շեշտադրվել է կրթաթոշակային խրախուսման մեխանիզմների ուժեղացման նպատակահարմարությունը՝ որպես մրցակցային և ակադեմիական մոտիվացիան բարձրացնող գործիք, սակայն ընդհանուր դաշտում նշվել է մոտիվացիայի խնդիր՝ կապված հարցումներին/գնահատումներին մասնակցության ցածր մակարդակի և տվյալների ամբողջականության ռիսկերի հետ:

ԲՏՃՄ ուղղություններով խրախուսման քաղաքականության քննարկումները նկարագրում են համեմատաբար կայուն հետաքրքրվածություն և անվճար տեղերի հիմնականում համալրվածություն, միաժամանակ մատնանշելով ենթաոլորտային անհամաչափություններ: Առանձին մասնագիտություններում դիմորդների նվազման հետևանքով առաջանում է ոչ այնքան «թափուր տեղերի», որքան արդյունավետության և նպատակայինության հարց՝ կապված այն հանգամանքի հետ, թե կրթաթոշակային աջակցությունը որքանով է վերածվում աշխատաշուկայի իրական համալրման, հատկապես մանկավարժական մասնագիտությունների պարագայում: Այս տրամաբանությամբ քննարկվել է պետություն–ուսանող պատասխանատվության բալանսը՝ պայմանագրային մոտեցումների կամ պարտադիր աշխատանքի մեխանիզմների կիրառման

գաղափարով: Միաժամանակ արձանագրվել է գործառնական բաց՝ կրթաթոշակների բաշխման և վերահաշվարկի ժամանակային ուշացումներով պայմանավորված, երբ ցածր առաջադիմություն ունեցող ուսանողը շարունակում է ստանալ աջակցություն մինչև տվյալների ամփոփումը. որպես հասցեագրման տարբերակ՝ առաջարկվել է կրթաթոշակների վերանայումն ավելի հաճախակի պարբերականությամբ (օրինակ՝ կիսամյակային)՝ ծախսերի ավելի նպատակային կառավարման համար:

Ուսանողների առաջադիմության գնահատման համակարգի վերաբերյալ քննարկումներում արձանագրվել է իրազեկվածության ցածր մակարդակ, ինչը ենթադրում է ոչ թե գործիքի արժեքի բացակայություն, այլ հաղորդակցության, ներգրավման և համակարգի գործնական իմպլեմենտացիայի ուժեղացման անհրաժեշտություն՝ հատկապես բուհերի ներսում շահակիցների շրջանակի ընդլայնման և մասնակցության մշակույթի ձևավորման ուղղությամբ: Ընդհանուր առմամբ, ֆոկուս քննարկումների արդյունքները ձևավորում են մեկ ընդհանրացված եզրագիծ. բարձրագույն կրթության որակի ապահովման գործիքակազմը ոլորտում ընդունված է որպես անհրաժեշտ և ռազմավարական, սակայն դրա կայուն և արդյունավետ կիրառումը պահանջում է համաֆինանսավորման և կառավարման քաղաքականության արդիականացում, տվյալահեն կառավարման ենթակառուցվածքների զարգացում, ինչպես նաև ներգրավված մարդկային ռեսուրսի պատրաստման և մոտիվացիոն մեխանիզմների համակարգում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Բարձրագույն կրթությունը պետության մարդկային կապիտալի ձևավորման, տնտեսության արտադրողականության, նորարարական կարողությունների և ազգային անվտանգության երկարաժամկետ հիմքային գործոններից է: Հետևաբար՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության պետական ծրագրերի ֆինանսավորման կառուցվածքը, բյուջետային կատարողականը, արդյունքային ցուցանիշների տրամաբանությունը, ինչպես նաև շահակիցների ներգրավվածությունն ու տվյալահեն կառավարման ենթակառուցվածքները պետք է դիտարկվեն որպես մեկ միասնական քաղաքականության շղթա:

2023–2025թթ. բյուջետային տվյալների քանակական վերլուծության և բուհերի պրոֆեսորադասախոսական ու վարչական անձնակազմի հետ իրականացված ֆոկուս քննարկումների որակական արդյունքների համադրումը թույլ է տալիս ձևակերպել հետևյալ հիմնական եզրահանգումները:

Կրթության ընդհանուր բյուջետային հատկացումների աճի պայմաններում «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն» ծրագրի հարաբերական առաջնահերթությունը նվազել է:

2023–2025թթ. համադրությունը ցույց է տալիս, որ պետական բյուջեի ծախսային մասի և ԿԳՄՍ նախարարության բյուջետային հատկացումների աճի ֆոնին բարձրագույն կրթության ծրագրի ֆինանսավորումը համաչափ չի ավելացել: Երկամյա կտրվածքով պետական բյուջեի փաստացի/պլանային ծախսերի կուտակային աճը կազմել է մոտ **32.8%**, իսկ նախարարության բյուջեի աճը՝ մոտ **44.9%**: Միաժամանակ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն» ծրագրի ֆինանսավորման մասով շատ ցածր փոփոխությունը եղել է գրեթե **չեզոք** (2024-ին՝ մոտ **+4.3%**, 2025-ին՝ մոտ **-3.3%**, կուտակային՝ մոտ

+0.8%):

Արդյունքում նվազել է ծրագրի տեսակարար կշիռը՝ ինչպես նախարարության բյուջեի ներսում (մոտ **5.6%-ից դառնալով 3.9%**), այնպես էլ պետական բյուջեի ընդհանուր ծախսերում (մոտ **0.54%-ից դառնալով 0.41%**): Սա ձևավորում է **բյուջետային կառուցվածքային անհամաչափություն**, քանի որ ոլորտը պահանջում է երկարաժամկետ ներդրումներ՝ կրթական ծրագրերի արդիականացման, նյութատեխնիկական բազայի բարելավման, գիտահետազոտական կարողությունների և մրցունակ միջավայրի ձևավորման համար:

2025թ. 9-ամսյա բյուջեի կատարողականը վկայում է թերածախսերի և պլանավորման իրատեսականության խնդիրների մասին

2025թ. 9 ամիսներին բյուջետային ծրագրով նախատեսվածի նկատմամբ արձանագրվել է **թերածախս 13.45%-ով** կամ կատարողականը կազմել է **86.5%**:

Բյուջետային կառավարման առումով այսպիսի թերակատարման պատճառներից են

- ծրագրային հայտերի ֆինանսական հաշվարկներն ու կանխատեսումները լիարժեք համահունչ չեն եղել իրականացման ընթացակարգերին և ժամկետներին (գնումների, պայմանագրերի, հաստատումների ցիկլ),
- ծրագրային գործիքակազմը բավարար ճկունություն չի ունեցել՝ տարվա ընթացքում պլանը լիարժեք իրացնելու համար,

Թերածախսերի առկայությունը հատկապես զգայուն է այն պայմաններում, երբ ծրագրի տեսակարար կշիռը բյուջեում նվազման միտում ունի:

Թերակատարման բարձր շեղումները կենտրոնացած են կապիտալ բնույթի և համակարգային բարեփոխումների միջոցառումների վրա

Ուսումնասիրությունները վկայում են, որ 2025թ. 9-ամսյա հաշվետվությամբ մի շարք միջոցառումներ ունեն բարձր պլան-փաստացի շեղումներ՝ հատկապես այն ուղղություններում, որոնք ապահովում են երկարաժամկետ արդյունքայնություն, այսպես՝

- շենքային պայմանների բարելավում՝ փաստացի ծախսը պլանից ցածր է մոտ **56.3%-ով**,

- ԵԲԿՏ-ին (Եվրոպական բարձրագույն կրթական տարածք) անդամակցությամբ պայմանավորված բարեփոխումներ՝ մոտ **76.9%** թերակատարում,
  ասպիրանտական կրթաթոշակներ (գիտական հաստատություններ)՝ մոտ **50.2%** թերակատարում,
  հետբուհական նպաստներ (գիտակրթական հաստատություններ)՝ մոտ **54.7%** թերակատարում:
  Միաժամանակ առավել «ստանդարտացված» ընթացակարգերով միջոցառումների մի մասում արձանագրվել է **100% կատարողական** (օր.՝ ուսումնական վարկերի տոկոսավճարների մասնակի փոխհատուցում և որոշ ծառայություններ):
  Սա փաստում է, որ թերակատարումը կրում է ոչ թե ընդհանուր, այլ **գործառնական բարդությամբ** պայմանավորված բնույթ. որքան բարդ է միջոցառման իրականացման շղթան, այնքան բարձր է թերակատարման ռիսկը՝ տարեկան հատկացումների լիարժեք իրացման առումով:

Որակի ապահովման և հավատարմագրման միջոցառումները գործիքային առումով անհրաժեշտ են, բայց ստեղծում են վարչարարական բեռ՝ առանց համաֆինանսավորման բավարար մեխանիզմների

Ֆոկուս քննարկումները ցույց են տալիս, որ բուհերի հավատարմագրումը ընկալվում է որպես որակի բարձրացման համակարգային գործիք, սակայն ծրագրային հավատարմագրման պարտադիր դառնալու պայմաններում բազմապատկվում է բուհերի վարչարարական ծանրաբեռնվածությունը: Այդ գործընթացը պահանջում է մշտադիտարկումներ, տվյալների շարունակական հավաքագրում, արտաքին փորձագիտական ներգրավում և խորհրդատվություն, որոնք ենթադրում են լրացուցիչ ծախսեր:
Սակայն բարձրագույն կրթության ոլորտի պետական աջակցության ներկայիս

մակարդակը բուհերի գնահատմամբ հաճախ բավարար չէ այդ բեռը հավասարակշռելու համար, ինչի հետևանքով բուհերը ստիպված են ներգրավել արտաբյուջետային ռեսուրսներ կամ կրճատել զարգացման այլ բաղադրիչներ: Սա կարող է առաջացնել ոլորտային անհամաչափություն՝ պայմանավորված բուհերի ռեսուրսային տարբերություններով:

ԲՈՒՀ-երի մարդկային ռեսուրսների ծանրաբեռնվածությունը և մոտիվացիոն ռիսկերը սահմանափակում են ծրագրերի իրականացման կարողունակությունը

Քննարկումներում արձանագրվել է, որ հավատարմագրման/որակի ապահովման գործընթացների հաջողությունը կախված է ներգրավված դերակատարների պատրաստվածությունից և մոտիվացիայից: Դասախոսների ծանրաբեռնվածության աճը (ծրագրերի նկարագրությունների մանրամասնեցում, գնահատման գործիքների մշակում) միշտ չէ, որ ուղեկցվում է աշխատանքի նորմավորման, պայմանագրային ամրագրումների կամ լրացուցիչ վարձատրության մեխանիզմներով:

Սա բյուջետային կառավարման տեսանկյունից ազդում է ծրագրերի **իրագործելիության** վրա. նույնիսկ հատկացումների առկայության դեպքում արդյունքի հասնելը կարող է սահմանափակվել մարդկային գործոնի պատճառով՝ ինչն անհրաժեշտ է ներառել ռիսկերի կառավարման տրամաբանության մեջ:

Միասնական տվյալների համակարգի ենթակառուցվածքային բացը սահմանափակում է արդյունքների վրա հիմնված բյուջետավորում կիրառելու հնարավորությունը

Բուհերը մատնանշում են միասնական և ստանդարտացված տեղեկատվական բազայի բացակայությունը՝ հիմնական ցուցիչների համադրելի չափման համար (ուսանող/դասախոս հարաբերակցություն, շրջանավարտների հետագիծ, ծրագրերի արդյունավետություն և այլն): Սա սահմանափակում է պետական քաղաքականության մակարդակում ֆինանսավորման թիրախավորման ճշգրտումը, խրախուսման մեխանիզմների ձևավորումը և արդյունքայնության գնահատումը:

Միևնույն ժամանակ, զեկույցում նշված տվյալների սահմանափակումները

(միավոր ծախսերի և շահառուների ամբողջական բազաների բացակայություն) փաստում են, որ անհրաժեշտ է ուժեղացնել **բյուջետային տվյալների բաց/հասանելի շերտը**՝ հանրային վերահսկողության և մասնակցային քննարկումների համար:

Հաղորդակցության և իրազեկման բացերը նվազեցնում են նոր մեխանիզմների օգտագործելիությունը և շահակիցների մասնակցայնությունը:

Ֆոկուս խմբերում արձանագրվել է ուսանողների առաջընթացի գնահատման ազգային համակարգի վերաբերյալ իրազեկվածության ցածր մակարդակի առկայությունը: Սա ցույց է տալիս, որ նոր գործիքների ներդրման դեպքում անհրաժեշտ է ապահովել փոփոխությունների կառավարում՝ հստակ հաղորդակցման, ներգրավման և կիրառության ուղեցույցների միջոցով: Հակառակ դեպքում ծախսերը կարող են չվերածվել արդյունքի՝ "ցածր օգտագործելիության" պատճառով, իսկ տվյալների որակը կարող է մնալ անկայուն:

Կրթաթոշակային և նպաստային համակարգերն ունեն ներառական կառուցվածք, բայց պահպանվում են թիրախավորման ու վերահսկողության բացեր

Կրթական աջակցության միջոցառումները (ուսանողական նպաստներ, կրթաթոշակներ, մարզաբնակների կեցության փոխհատուցում, ուսումնական վարկերի տոկոսավճարների սուբսիդավորում, տեղահանված ուսանողների ուսման վարձի փոխհատուցում) ընդհանուր առմամբ ապահովում են սոցիալական խմբերի ներառում և որոշ ուղղություններով խրախուսման քաղաքականություն: Միաժամանակ արձանագրվել է հետևյալ խնդիրը, որ անապահովության միավորի ստուգման մեխանիզմները կարող են չարտացոլել իրական եկամտային իրավիճակները,

ուսանողական հոսքերի փոփոխությունները միշտ չէ, որ ուղեկցվում են բյուջետային ճշգրտումներով:

2023–2025թթ. ֆինանսական և արդյունքային տվյալների համադրությունը, ինչպես նաև բուհերի աշխատակազմի մասնակցությամբ ֆոկուս քննարկումների

արդյունքները փաստում են, որ բարձրագույն կրթության ոլորտը գտնվում է երկու միաժամանակյա գործընթացների հատման կետում: Մի կողմից՝ պետական բյուջեն և ոլորտային նախարարության ֆինանսավորումը ընդլայնվում են, ինչը վկայում է հանրային ծախսերի աճի և կրթության նկատմամբ ընդհանուր ուշադրության մասին: Մյուս կողմից՝ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն» ծրագրի ֆինանսավորման աճը չի համընկնում այդ ընդլայնման տեմպերի հետ, և ծրագրի տեսակարար կշիռը նվազում է թե՛ ԿԳՄՄՆ բյուջեում, թե՛ պետական բյուջեի ծախսերում: Այդ կառուցվածքային անհամաչափությունը սահմանափակում է ոլորտի երկարաժամկետ ներդրումային օրակարգի ֆինանսական հիմքը՝ հատկապես որակի բարձրացման, ենթակառուցվածքների բարելավման, բարեփոխումների և գիտական ներուժի զարգացման ուղղություններով:

2025թ. 9-ամսյա կատարողականում արձանագրված 13.45% թերածախսը ցույց է տալիս, որ խնդիրը միայն «քանակական հատկացումների» մեջ չէ. առկա են պլանավորման իրատեսականության, գործիքակազմի կիրառելիության և իրականացման վարչարարական արագության հարցեր: Առավել բարձր թերակատարումները կենտրոնացած են այն միջոցառումների վրա, որոնք ունեն բարդ իրականացման շղթա և երկարաժամկետ ազդեցության պոտենցիալ (ենթակառուցվածքային ներդրումներ, բարեփոխումների միջոցառումներ, հետբուհական/գիտական աջակցություն): Սա նշանակում է, որ համակարգը համեմատաբար լավ է «սպասարկում» ստանդարտացված ընթացակարգերով աջակցությունները, բայց դժվարանում է լիարժեք իրացնել համակարգային վերափոխման բաղադրիչները:

Ֆոկուս քննարկումները լրացնում են քանակական պատկերը՝ ցույց տալով, որ որակի ապահովման և հավատարմագրման գործիքակազմը ճանաչվում է որպես անհրաժեշտ, սակայն այն ստեղծում է ֆինանսական ու մարդկային ծանրաբեռնվածություն՝ առանց բավարար համաֆինանսավորման և կազմակերպական կարողությունների ամրապնդման: Միաժամանակ, միասնական տվյալային ենթակառուցվածքների բացը սահմանափակում է արդյունքայնության վրա հիմնված բյուջետավորման, թիրախավորման և

ազդեցության չափման հնարավորությունները: Հաղորդակցության և շահակիցների իրազեկման խնդիրները նվազեցնում են նոր մեխանիզմների օգտագործելիությունը, իսկ կրթաթոշակային/նպաստային համակարգում առկա թիրախավորման ու վերահսկողության բացերը արտահայտվում են պլանային ցուցանիշներից փաստացի շեղումներով և ծախս–շահառուների թիվ դինամիկայի հակասություններով:

Ընդհանուր առմամբ, ոլորտի բյուջետային քաղաքականության բարելավման հիմնական ուղենիշը պետք է դիտարկել **ծախսային կատարողականից դեպի արդյունքայնության և ազդեցության վրա հիմնված ծրագրային կառավարում** անցումը՝ ապահովելով ֆինանսավորման կառուցվածքային համահարթեցում, բարդ միջոցառումների իրականացման վարչարարության արագացում և ռիսկերի կառավարում, միավոր ծախսերի ու ազդեցության ցուցիչների ներդրում, տվյալների բացահայտման և հաշվետվողականության բարձրացում, և մարդկային ռեսուրսների կարողությունների ու մոտիվացիայի ամրապնդում՝ որպես համակարգային բարեփոխումների իրականացման հիմնարար նախապայման:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2023–2025 թթ. ֆինանսական տվյալների և 2025 թ. 9-ամսյա կատարողականի համադրական վերլուծությունը, ինչպես նաև բուհերի պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի ֆոկուս քննարկումների արդյունքների, կատարված եզրակացությունների համատեքստում առաջարկվում է ստորև ներկայացված բարելավումների փաթեթը՝ ուղղված ֆինանսավորման համաչափեցմանը, ծրագրային բյուջետավորման արդյունքայնացմանը, բյուջեի ընթացիկ կառավարման ուժեղացմանը, հաշվետվողականության թվայնացմանը և քաղաքականության թիրախավորման կատարելագործմանը:

1. **Բարձրագույն կրթության ծրագրի ֆինանսավորման կառուցվածքային համաչափեցում՝ ԿԳՄՄՆ և պետբյուջեի ընդլայնմանը համահունչ:**

Վերլուծությունը արձանագրում է, որ 2023–2025 թթ. ընթացքում պետական բյուջեի ծախսային մասի աճը կազմել է շուրջ **32.8%**, ԿԳՄՄՆ ծախսային մասի աճը՝ շուրջ **44.9%**, մինչդեռ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրի ֆինանսավորումը 2023–2024 թթ. աճել է միայն **4.3%-ով**, իսկ 2024–2025 թթ. պլանավորված նվազումը կազմել է **3.3%**: Այս անհամաչափությունը կառուցվածքային ռիսկ է՝ դանդաղեցնելով ծրագրերի արդիականացման, որակի բարձրացման և ենթակառուցվածքային բարելավման հնարավորությունները:

Առաջարկվում է ՄԺԾԾ-ի (2025–2027) շրջանակում ամրագրել **«Ֆինանսավորման համաչափության սկզբունք»**, ըստ որի բարձրագույն կրթության ծրագրի տարեկան աճը **չպետք է էականորեն հետ մնա** ԿԳՄՄՆ բյուջեի աճի տեմպերից: Միաժամանակ նպատակահարմար ենք համարում սահմանել ոլորտի հատկացումների **«նվազագույն շեմ»**՝ կանխելու բարձրագույն կրթության ծրագրի տեսակարար կշռի նվազումը ԿԳՄՄՆ բյուջեի ներսում (օր.՝ 2025 թ. մոտ 3.9% մակարդակից՝ փուլային վերականգնում դեպի կայուն շեմ):

Առաջարկության կիրառման արդյունքում ակնկալվում է ոլորտային բարեփոխումների ֆինանսական հիմքի ամրապնդում, միջնաժամկետ կանխատեսելիության բարձրացում, բարձրագույն կրթական համակարգի

մրցունակության բարձրացման գործիքների ֆինանսավորման կայունացում:

Մոնիթորինգի ցուցիչներ.

- ծրագրի տեսակարար կշիռը ԿԳՄՄՆ բյուջեում
- ծրագրի տարեկան աճի տարբերությունը ԿԳՄՄՆ աճից (տոկոսային կետ)
- ՄԺԾԾ-ով սահմանված «շեմի» կատարողականի տոկոս:

2. Կրթության բյուջեի կատարման և հաշվետվողականության «ծախսային կատարողականից» դեպի «արդյունքայնություն և ազդեցություն»

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ծախսերի «կատարման տոկոսը» հաճախ չի տալիս բավարար պատկեր՝ արդյոք ծախսը վերածվել է իրական արդյունքի կամ ազդեցության: Մի շարք միջոցառումների դեպքում նկատվում են հակասական դինամիկաներ (շահառուների աճ՝ նվազող ֆինանսավորման պայմաններում կամ հակառակը), ինչը առանց միավոր ծախսի հաշվարկի դժվարացնում է արդյունավետության գնահատումը:

Առաջարկվում է յուրաքանչյուր միջոցառման համար սահմանել **ցուցիչների եռաստիճան փաթեթ**՝ ելքային, արդյունքային և ազդեցության ցուցիչներով, ինչի արդյունքում հաշվետվողական կատարողականը փոխարինվի արդյունքահեն գնահատմամբ: Միաժամանակ անհրաժեշտ ենք համարում պարտադիր դարձնել **միավոր ծախսերի հաշվարկը և ամրագրումը** (դրամ/շահառուների թիվ, դրամ/ծառայությունների քանակ, դրամ/հավատարմագրում և այլն)՝ հատկապես այն միջոցառումներում, որտեղ ծախս–շահառու հարաբերակցությունը փոփոխական է:

Առաջարկության կիրառման արդյունքում ակնկալվում է ծախսերի արդյունավետության չափելիության բարձրացում, քաղաքականության գործիքների թիրախավորման ճշգրտում և արդյունքահեն հաշվետվողականության ամրապնդում:

Մոնիթորինգի ցուցիչներ.

- ելքային/արդյունքային/ազդեցության ցուցիչներով նկարագրված միջոցառումների մասնաբաժին (%)
- միավոր ծախսի հաշվարկ ունեցող միջոցառումների մասնաբաժին (%)

- տարեկան արդյունքայնության հաշվետվությունների հրապարակման պարբերականություն:

3) Բյուջեի թերածախսերի նվազեցման համար ներդնել բյուջետային ցուցանիշների ընթացիկ ճշգրտման մեխանիզմ

2025 թ. 9-ամսյա կատարման տվյալներով բարձրագույն կրթության ծրագրում արձանագրվել է շուրջ **13.45% թերածախս**, ինչը ցուցում է՝ անհրաժեշտ է տարվա ընթացքում օպերատիվ կառավարման մեխանիզմ: Առաջարկվում է ներդնել **ընթացիկ պարտադիր վերանայում** (6-րդ և 9-րդ ամիսներին)՝ պլան–փաստացի շեղումների հիմքով: Վերանայումների շրջանակում նպատակահարմար է կիրառել **վերաբաշխման մեխանիզմ**՝ թերակատարում ունեցող միջոցառումներից դեպի բարձր իրագործելիություն/պահանջարկ ունեցող միջոցառումներ՝ պահպանելով ծրագրային նպատակայնությունը: Կապիտալ և բարդ բարեփոխումային միջոցառումների համար առաջարկվում է կիրառել **իրագործելիության ուսումնասիրություն**՝ գնումների, մրցույթների, պայմանագրերի և տեխնիկական պատրաստվածության փուլային հսկողությամբ: Առաջարկության կիրառումը կարող է բերել թերածախսերի նվազում, միջոցների ժամանակին իրացում, տարեկան «հապճեպ ծախսերի» ռիսկերի նվազեցում:

Մոնիթորինգի ցուցիչներ.

- տարեկան թերածախսի մակարդակ (%)
- տարվա ընթացքում կատարված ճշգրտումների թիվ (հատ)
- ճշգրտումից հետո կատարողականի բարելավում (տոկոսային կետ):

4) Որակի ապահովման և հավատարմագրման բեռի փոխհատուցում՝ համաֆինանսավորման քաղաքականության ներդրմամբ:

Ֆոկուս քննարկումները ցույց են տվել, որ հավատարմագրումը դիտարկվում է որպես անհրաժեշտ գործիք, բայց նաև՝ ֆինանսական և կազմակերպական ծանրաբեռնվածություն, հատկապես ծրագրային հավատարմագրման պահանջների ընդլայնման պայմաններում: Առաջարկվում է ՀՀ պետական բյուջեի «Բարձրագույն կրթության որակի ապահովման ծառայություններ» միջոցառման շրջանակում ձևավորել

նպատակային ենթամիջոցառում՝ **հավատարմագրման/որակի ապահովման ծախսերի մասնակի փոխհատուցման** համար (ներքին ՈԱ ստորաբաժանումների կարողությունների զարգացում, տվյալների հավաքագրման գործիքներ, արտաքին փորձագիտական աջակցություն): Միաժամանակ նպատակահարմար ենք համարում ներդնել **վարկանշային-խրախուսական մոտեցում՝** պահանջները ժամանակին կատարող բուհերի համար՝ փոքր մրցութային աջակցություններով:

Առաջարկի կիրառման արդյունքում ակնկալվում է ԲՈՒՀ-երում վարչարարական բեռի մեղմում, որակի մշակույթի կայունացում, բուհերի միջև համաչափ զարգացման հնարավորություններ:

Մոնիթորինգի ցուցիչներ.

- հավատարմագրման գործընթացների ժամանակին ավարտվածություն (%)
- փոխհատուցման գործիքից օգտված բուհերի թիվ
- տվյալների լրացվածության և որակի ցուցիչներ (%)

5) Բարձրագույն կրթության ոլորտի համընդհանուր տվյալների ենթակառուցվածքի ստեղծում՝ արդյունքահեն բյուջետավորման համար:

Քննարկումներում և փաստաթղթային վերլուծությունում շեշտվել է միասնական, ստանդարտացված տեղեկատվական բազայի բացակայությունը, ինչը խոչընդոտում է թե՛ ներբուհական կառավարումը, թե՛ պետական քաղաքականության արդյունքահեն ճշգրտումը:

Առաջարկվում է ներդնել բարձրագույն կրթության ոլորտի **միասնական ենթակառուցվածք՝** ցուցանիշների և տվյալների ստանդարտներով (ուսանող/դասախոս հարաբերակցություն, շավարտականություն, շրջանավարտների զբաղվածություն, գիտական արտադրողականություն և այլն): Համակարգը պետք է կապի տվյալները բյուջետային ծրագրերի հետ՝ ապահովելով «ծախս–արդյունք–ազդեցություն» թվայնացված շղթա և թափանցիկ հրապարակում:

Համակարգի ներդրումը կնպաստի տվյալահեն կառավարմանը,

ֆինանսավորման թիրախավորման ճշգրտմանը և հաշվետվողականության բարձրացմանը:

Մոնիթորինգի ցուցիչներ.

- Համակարգում հրապարակված ցուցանիշների քանակ,
- բուհերի տվյալների ներկայացման հաճախականության տոկոս,
- բյուջետային միջոցառումների միասնական կառավարման տվյալների քանակ:

6) Մարզաբնակների կեցության փոխհատուցման ծրագրի վերագնահատում՝ պահանջարկի և որակի չափման հիմքով:

Շահառուների նվազման միտումը ցույց է տալիս, որ ծրագրի պայմանագրային պարամետրերը և ծառայության գրավչությունը պահանջում են միջոցառման նախագծի վերանայում, որպեսզի այն իրականում մեղմի մարզերի և Երևանի անհավասար բաշխվածությունը բարձրագույն կրթության ոլորտում: Առաջարկվում է վերանայել տեղերի առավելագույն քանակը, ծառայության նվազագույն պահանջները և հատուցման տրամաբանությունը՝ բարձրացնելով ծրագրի հասանելիությունն առավել լայն շերտերի համար: Միաժամանակ անհրաժեշտ է ներդնել միավոր ծախսի շեմ և ծառայության որակի չափում՝ հանրակացարանային պայմանների ստուգիչներով: Առաջարկի կիրառման արդյունքում ակնկալվում է ծրագրի ծածկույթի աճ, սոցիալական ազդեցության ուժեղացում և ծառայության որակի բարձրացում:

Մոնիթորինգի ցուցիչներ.

- հանրակացարանում բնակվող ուսանողների թիվ,
- մեկ ուսանողի հաշվով փոխհատուցում (դրամ),
- որակի գնահատման արդյունքներ:

7) ԼՂ-ից բռնի տեղահանված ուսանողների աջակցություն՝ կայուն, կանխատեսելի և բազմամյա ֆինանսավորմամբ

Ֆինանսավորման տատանողական բնույթը և կառուցվածքային տվյալների ոչ լիարժեք ներկայացումը սահմանափակում են ծրագրի ազդեցության գնահատումը և երկարաժամկետ ինտեգրման պլանավորումը: Առաջարկվում է ձևավորել **միջնաժամկետ աջակցման փաթեթ**՝ հստակ

կանոններով (լրիվ/մասնակի փոխհատուցում, առավելագույն շեմեր, կրթական աստիճաններ): Զուգահեռաբար նպատակահարմար է ինտեգրման տրամաբանությամբ համադրել ֆինանսական աջակցությունը՝ ակադեմիական/հոգեբանական աջակցությամբ և պրակտիկայի/զբաղվածության կապերով՝ «կրթությունից դեպի աշխատանք» շղթայի ուժեղացման համար: **Առաջարկի կիրառման արդյունքում նվազելու են ԼՂ-ից բռնի տեղահանված ուսանողների՝** բարձրագույն կրթության համակարգից դուրս մնալու ռիսկերը, բարձրանալու է երկարաժամկետ ինտեգրումը և ծրագրի կանխատեսելիություն:

Մոնիթորինգի ցուցիչներ.

- շահառուների պահպանման/ավարտելիության ցուցիչներ,
- մեկ շահառուի միջին աջակցություն (դրամ):

8) Բարեփոխումներ ներառող միջոցառումների գործառնական պարզեցում և ընթացակարգային ստանդարտացում

Բյուջետային միջոցառումների ցածր կատարողականը որոշ դեպքերում պայմանավորված է ոչ թե միայն ֆինանսավորմամբ, այլ նաև բարդ վարչարարությամբ, չստանդարտացված ընթացակարգերով և պատասխանատվությունների անորոշ բաշխմամբ: Առաջարկվում է մշակել **ստանդարտ գործառնական ընթացակարգեր** ՝ պայմանագրային, հաշվետվական, գնումների և ծառայությունների մատուցման փուլերի համար, ինչպես նաև ներդնել գնումների օրացույց և պատասխանատվությունների քարտեզ՝ ժամանակային կորուստները նվազեցնելու նպատակով: Առաջարկի կիրառման արդյունքում ակնկալվում է թերակատարումների նվազում, վարչարարության արագացում, միջոցառումների իրագործելիության բարձրացում:

Մոնիթորինգի ցուցիչներ.

- գործընթացների միջին տևողություն (օր),
- տվյալ միջոցառումներում թերակատարումների տոկոս (%),
- ստանդարտ ընթացակարգերի կիրառման տոկոս:

9) Թափանցիկության թվայնացված համակարգ և մասնակցայնության ինստիտուցիոնալացում:

Ֆոկուս քննարկումները արձանագրել են շահակիցների իրազեկվածության ցածր մակարդակ՝ նույնիսկ ներդրված որոշ համակարգերի մասով, ինչը նշանակում է՝ տեղեկատվական քաղաքականությունը և հաշվետվողականության գործիքակազմը բավարար ինստիտուցիոնալացված չեն:

Առաջարկվում է տարեկան հրապարակել **պարզեցված բյուջե** (քաղաքացու բյուջե)՝ ընթեռնելի ձևաչափով՝ նպատակներ, ծախսային ուղղություններ, արդյունքներ, շեղումների բացատրություններ: Միաժամանակ առաջարկվում է բյուջետային հայտերի ձևավորման փուլում կազմակերպել **մասնակցային քննարկումներ**՝ բուհերի, ուսանողների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի ներգրավմամբ՝ նվազեցնելով ձևական մասնակցության ռիսկը և բարձրացնելով պլանավորման իրատեսականությունը: Առաջարկի կիրառման արդյունքում կավելանահանրային վերահսկողության իրական հնարավորությունը, կարձանագրվեն վստահության աճ և ոլորտային քաղաքականության լեգիտիմության բարձրացում:

Մոնիթորինգի ցուցիչներ.

- հրապարակված պարզեցված բյուջեների քանակ (հատ)
- քննարկումների թիվ և ներգրավվածների թիվ
- առաջարկների ընդունման տոկոս (%)

10) Մարդկային ռեսուրսների կարողունակության ամրապնդում և մոտիվացիոն մեխանիզմների ներդրում

Հավատարմագրման, տվյալների հավաքագրման և որակի ապահովման գործընթացներում ծանրաբեռնվածության աճը, եթե չի ուղեկցվում աշխատանքի նորմավորումով և խրախուսմամբ, ձևավորում է մոտիվացիոն ռիսկեր և սահմանափակում որակի մշակույթի արմատավորումը:

Առաջարկվում է ԿԳՄՄՆ-ում և բուհերում ներդնել նպատակային կարողությունների զարգացման ծրագիր՝ ծրագրային կառավարում, տվյալահեն մոնիթորինգ և գնահատում, գնումների պլանավորում, հավատարմագրման մեթոդաբանություն: Զուգահեռաբար անհրաժեշտ է կիրառել աշխատանքի նորմավորման/խրախուսման գործիքներ՝ հավելյալ գործառույթների համար

(գործառույթի ամրագրում, հավելավճարային մոտեցումներ կամ սակագնային կարգավորում):

Առաջարկը կբերի ծրագրերի իրագործելիության բարձրացման, տվյալների որակի աճի և մոտիվացիոն ռիսկերի նվազեցում:

Մոնիթորինգի ցուցիչներ.

- վերապատրաստված անձանց թիվ,
- տվյալների լրացվածության մակարդակ (%):

Մեր վերլուծությունների ընթացքում վերհանված խնդիրներ և դրանց լուծման համար առաջարկությունները կարծում ենք կնպաստեն ՀՀ պետական ծախսերի արդյունավետության և բարձրագույն կրթության որակի բարձրացմանը:

Աղբյուրներ

1. «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2022 թվականի դեկտեմբերի 8-ին, ՀՕ-455-Ն

   Բյուջեի հավելվածներ

2. Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության որոշումը

   Հավելվածներ

3. «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2023 թվականի դեկտեմբերի 7-ին,ՀՕ-386-Ն

   Բյուջեի հավելվածներ

4. ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի 2023թ. բյուջետային հատկացումներ
5. «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության որոշումը,ընդունված է 28 դեկտեմբերի 2023 թվականի N 2323 - Ն

   Հավելվածներ

6. Պետական բյուջեի հաշվետվություն (2024թ. 1-ին եռամսյակ)
7. ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի 2024թ. բյուջետային հատկացումներ
8. «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2024 թվականի դեկտեմբերի 4-ին, համարը ՀՕ-471-Ն

   Օրենքի հավելվածներ

9. ՀՀ կառավարության 2025 թվականի բյուջետային ուղերձ-բացատրագիր

   Բացատրագրի հավելվածներ

10. «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» օրենքից բխող գործողությունների ծրագրի» հաշվետվություն
11. ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի 2025թ. բյուջետային հատկացումներ

Հավելված 1.

2023-2024 թթ ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում պետական բյուջեի հատկացումներն ու արդյունքային ցուցանիշները

	2023		2024	
Ծրագրի անվանումը	Տարեկան ճշտված պլան	Փաստացի	Տարեկան ճշտված պլան	Փաստացի
1. ՀՀ Բարձրագույն կրթության որակի ապահովման ծառայությունների վրա կատարված ծախսերն ու արդյունքային ցուցանիշները (հազար դրամ)	**59,989.50**	**59,989.50**	**112,672.50**	**112,672.50**
1.1. Բարձրագույն ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման կազմակերպման ապահովում	7	7	7	7
1.2. Մասնագիտական կրթության վերաբերյալ թեմատիկ վերլուծություններ	1	1	1	1

(բարձրագույն կրթություն)				
1.3. Բարձրագույն ուսումնական հաստատություններում մշտադիտարկումների (ինստիտուցիոնալ, ծրագրային) իրականացում	10	10	10	10
1.4. Ուսանողական հարցման և առաջընթացի գնահատման ազգային համակարգի ներդրում աշխատանքների իրականացում	1	0	1	1
1.5. Շահակիցների (մուտեր, փորձագետներ, ուսանողներ, մուտերի որակի ապահովման կենտրոններ, դասախոսներ) համար աշխատաժողովների կազմակերպում	2	2	2	2
1.6 Ծրագրային հավատարմագրումներ իրականացնելու համար որակի ապահովման ոլորտային չափանիշների մշակման աշխատանքների իրականացում, փաստաթղթերի մշակում	1	1	1	1
1.7. Հիմնադրամի գործունեության վերաբերյալ հասարակությանն իրազեկում	1 00	100	10	10
1.8.Մասնակցություն որակի ապահովման միջազգային կառույցների աշխատանքներին, որոնց անդամակցում է ՈԱԱԿ-ը (ENQA, EQAR, CHEA, CEENQA, INQAHEE)	10	10	10	10
1.9.Մասնագիտական ուսումնական հաստատությունների և դրանց կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման չափանիշների վերանայում և ընթացակարգերի, քաղաքականությունների, ընթացակարգերի մշակում	2	2	2	2
1.10. Վերոնշյալ գործընթացները իրականացվելու են ՀՀ կառավարության 2008 թվականին ընդունված 1486-Ն և 2011 թվականին ընդունված 978 -Ն որոշումներին համապատասխան (տոկոս)	100	100	100	100
2. Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում	**10,430,280.87**	**9,859,278.70**	**9,543,032.31**	**9,468,706.68**
2.1.Նպաստներ ստացող ուսանողների թիվ, մարդ	10967	10413	9049	10838
2.2. Ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցմամբ սովորող ուսանողների թիվ, մարդ	1000	647	437	600
3. Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ	**685,792.80**	**619,281.65**	**862,013.20**	**828,554.47**
3.1 Կրթաթոշակ ստացող ուսանողների միջին տարեկան թիվ, մարդ	10365	7482	9320	7024

4. Հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակը	**424,080.00**	**366,468.10**	**370,749.00**	**366,522.57**
Կրթաթոշակ ստացող ուսանողների միջին տարեկան թիվ, մարդ	555	483	506	506
5. Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում բուհական հաստատություններում	**373,655.20**	**339,358.90**	**482,833.00**	**459,644.30**
Ուսանողական նպաստներ ստացողների միջին տարեկան թիվ, մարդ	904	732	630	630
6. Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայություններ	**43,113.50**	**43,113.50**	8,622.70	8,622.70
6.1. Խորհրդատվության տրամադրում/խորհրդատվական տեղեկանք, հատ	750	2106	1	1
6.2. Բուհերի համար ճանաչման ընթացակարգերի վերաբերյալ սեմինարներ, հատ	2	2	800	800
6.3. Փոխճանաչման երկկողմ համաձայնագրերի վերաբերյալ խորհրդատվություն, հատ	1	1	2	2
7. Երևանում բարձրագույն կրթության հասանելիության ապահովում մարզաբնակ ուսանողներին, կեցության վարձավճարի փոխհատուցում մարզաբնակ և օտարերկրյա ուսանողներին	**35,045.50**	**35,045.50**	**35,045.50**	**32,417.10**
7.1. Հանրակացարանում բնակվող ուսանողների թիվ, մարդ	193	250	240	222
8. Ուսումնական վարկերի տոկոսավճարների մասնակի փոխհատուցում	**74,189.40**	**74,189.40**	**66,300.00**	**31,993.55**
Ուսանողների միջին տարեկան թիվ, մարդ	17533	9097	23812	23100
9. Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում սովորող ուսանողների ուսման վարձի փոխհատուցում	**257,722.90**	**254,235.20**	**578,308.70**	**508,400.43**
9.1 . Ուսման վարձի փոխհատուցում ստացող ուսանողների թիվը, մարդ	860	823	1507	757
10. Ասպիրանտական կրթաթոշակներ գիտական հաստատություններում սովորողներին	**72,160.00**	**55,272.12**	**53,698.00**	**53,214.30**
10.1 Կրթաթոշակ ստացող ուսանողների թիվ, մարդ	101	73	**75**	**75**
11. Հետբուհական մասնագիտական կրթության գծով կրթաթոշակների տրամադրում գիտակրթական հաստատություններում	**424,080.00**	**366,468.10**	**370,749.00**	**366,522.57**
11.1. Կրթաթոշակ ստացող ուսանողների միջին տարեկան թիվ, մարդ	555	483	506	506

12. Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում գիտակրթական հաստատություններում	**37,464.70**	**20,463.89**	**18,586.20**	**17,704.86**
12.1 Ուսանողական նպաստներ ստացողների միջին տարեկան թիվ, մարդ	178	93	43	43
13. . **2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողներին ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրում**	**440,237.50**	**439,321.30**	**753,356.30**	**735,127.82**

Հավելված 2.

2025 թ ինն ամիսների ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում պետական բյուջեի հատկացումներն ու արդյունքային ցուցանիշները

	2025	
Ծրագրի անվանումը	Տարեկան ճշտված պլան	Փաստացի
1. ՀՀ Բարձրագույն կրթության որակի ապահովման ծառայությունների վրա կատարված ծախսերն ու արդյունքային ցուցանիշները (հազար դրամ)	59,989.5	44,992.1
1.1. Բարձրագույն ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման կազմակերպման ապահովում	10	10
1.2. Մասնագիտական կրթության վերաբերյալ թեմատիկ վերլուծություններ (բարձրագույն կրթություն)	1	1
1.3. Բարձրագույն ուսումնական հաստատություններում մշտադիտարկումների (ինստիտուցիոնալ, ծրագրային) իրականացում	15	15

1.4. Ուսանողական հարցման և առաջընթացի գնահատման ազգային համակարգի ներդրում աշխատանքների իրականացում	1	1
1.5. Շահակիցների (մուտեր, փորձագետներ, ուսանողներ, մուտերի որակի ապահովման կենտրոններ, դասախոսներ) համար աշխատաժողովների կազմակերպում	2	2
1.6 Ծրագրային հավատարմագրումներ իրականացնելու համար որակի ապահովման ոլորտային չափանիշների մշակման աշխատանքների իրականացում, փաստաթղթերի մշակում	0	0
1.7. Հիմնադրամի գործունեության վերաբերյալ հասարակությանն իրազեկում	100	100
1.8.Մասնակցություն որակի ապահովման միջազգային կառույցների աշխատանքներին, որոնց անդամակցում է ՈԱԱԿ-ը (ENQA, EQAR, CHEA, CEENQA, INQAHEE)	10	10
1.9.Մասնագիտական ուսումնական հաստատությունների և դրանց կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման չափանիշների վերանայում և ընթացակարգերի, քաղաքականությունների, ընթացակարգերի մշակում	2	2
1.10. Վերոնշյալ գործընթացները իրականացվելու են ՀՀ կառավարության 2008 թվականին ընդունված 1486-Ն և 2011 թվականին ընդունված 978 -Ն որոշումներին համապատասխան (տոկոս)	100	100
2. Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում	**10,481,397.3**	**6,701,224.8**
2.1.Նպաստներ ստացող ուսանողների թիվ, մարդ	11794	10865
2.2. Ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցմամբ սովորող ուսանողների թիվ, մարդ	1000	663
3. Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ	**532,188.0**	**334,734.0**
3.1 Կրթաթոշակ ստացող ուսանողների միջին տարեկան թիվ, մարդ	11869	4940
4. Հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակը	**532,188.0**	**334,734.0**
Կրթաթոշակ ստացող ուսանողների միջին տարեկան թիվ, մարդ	879	870

5. **Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում բուհական հաստատություններում**	**499,228.0**	**305,266.6**
Ուսանողական նպաստներ ստացողների միջին տարեկան թիվ, մարդ	1006	812
6. Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայություններ	**43,113.5**	**30,179.5**
6.1. Խորհրդատվության տրամադրում/խորհրդատվական տեղեկանք, հատ	800	800
6.2. Բուհերի համար ճանաչման ընթացակարգերի վերաբերյալ սեմինարներ, հատ	2	2
6.3. Փոխճանաչման երկկողմ համաձայնագրերի վերաբերյալ խորհրդատվություն, հատ	1	1
7. Երևանում բարձրագույն կրթության հասանելիության ապահովում մարզաբնակ ուսանողներին, կեցության վարձավճարի փոխհատուցում մարզաբնակ և օտարերկրյա ուսանողներին	**35,045.5**	**26,284.2**
7.1. Հանրակացարանում բնակվող ուսանողների թիվ, մարդ	240	.
8. Ուսումնական վարկերի տոկոսավճարների մասնակի փոխհատուցում	**66,300.0**	**49,725.0**
Ուսանողների միջին տարեկան թիվ, մարդ	17533	17533
9. Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում սովորող ուսանողների ուսման վարձի փոխհատուցում	**254,235.2**	**176,936.2**
9.1 . Ուսման վարձի փոխհատուցում ստացող ուսանողն"րի թիվը, մարդ	823	823
10. Ասպիրանտական կրթաթոշակներ գիտական հաստատություններում սովորողներին	**89,040.0**	**31,061.3**
10.1 Կրթաթոշակ ստացող ուսանողների թիվ, մարդ	124	87
11. **Հետբուհական մասնագիտական կրթության գծով կրթաթոշակների տրամադրում գիտակրթական հաստատություններում**	**35,586.2**	**11,288.7**
11.1. Կրթաթոշակ ստացող ուսանողների միջին տարեկան թիվ, մարդ	358	350
12. Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում գիտակրթական	**11,288.7**	**11,288.7**

հաստատություններում		
12.1 Ուսանողական նպաստներ ստացողների միջին տարեկան թիվ, մարդ	82	82
13. . **2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողներին ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրում**	**440,237.5**	**176,488.8**

Սույն զեկույցը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի, «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի և «Ագորա Սենթրլ Յուրոփ» ՀԿ-ի (Չեխիա) հետ համագործակցաբար գործարկվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Կոմպասս» գիտահետազոտական,կրթական և խորհրդատվական կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Թափանցիկության և մասնակցային վերահսկողության խթանում ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում մոնիթորինգի և վերլուծության միջոցով» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Կոմպասս» գիտահետազոտական,կրթական և խորհրդատվական կենտրոն» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

This report has been produced with the financial support of the European Union, within the framework of the sub-grant provided by the "Budgets for Citizens"

program, implemented in cooperation with the "Armenian Lawyers Association" NGO, the "Center for Economic Development and Research" NGO and "Agora Central Europe" NGO (Czech Republic) within the framework of the sub-grant project "Promoting Transparency and Participatory Control in the Higher Education Sector of the Republic of Armenia through Monitoring and Analysis" implemented by the "Compass" Research, Educational and Consulting Center" NGO. The contents are the sole responsibility of the "Compass" Research, Educational and Consulting Center" NGO and do not necessarily reflect the views of the European Union.